

1350

Ի. Մ. Փ. Ա.

ԽՈՐՀՈՒՐԳ

ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

**Յ. Մ. ՍԷՔԵԱՆ**  
**ՏՊԱՐԱՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ**  
**ԹՂԹԱՎԱՃԱՌՍՏՈՒՆ**

**№ 79**

دا - آ

ԽՈՐՀՈՒՐԴ

# ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

Յ. Մ. Բ. ՅԻՍՈՒՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷ

م. م. ب. م. م.

«Զայս արարե՛ք առ  
խմոյ յիշատակի:»  
(Ա. Կորնթ. ժԱ. 24)



Բ. Տ Ի Պ

Handwritten signature or scribble



Կ. ՊՈՂԻՍ

ՏՊԱԳՐ. Յ. Մ. ՍԷՔԵԱՆ

1926

Nihil obstat.

P. J. B. Costa de Beauregard S. J.

Lugduni die 12 Junii 1926.

Imprimatur

Ex Curia Archiepicali Cpolina

die 14 Junii 1926

† **Ang. Rotta**  
Dél. apost.




Սուրբ պատարագ! Աստուծոյ հրաշալեաց հրաշալիքը սիրոյն եւ սքանչելեացը համառօտութիւնը երկրիս վրայ մեզ շնորհուած նուէր մը, որ մեր Աստուածային պարգեւատուին անթերի լրութիւնը լիովին կ'ամփոփէ յինքեան:


Նախնի քրիստոնեայք՝ ամէն անգամ որ այս կենսատու խորհրդոյն ներկայ կը գտնուէին, ջերմ եռանդեամբ կ'ընկերանային դպիրներու երգոց եւ սաղմոսաց, կը մասնակցէին սարկաւազներու մաղթանաց եւ աղաչանաց, կը միաբանէին պատարագիչ քահանային ըսած աղօթից եւ փառատրութեանց: Այսպիսի հոգեվառ պատրաստութեամբ սաէպ, նոյն իսկ ամէն օր, կը մօտենային սուրբ սեղանոյն, կ'ընդունէին Յիսուսի Քրիստոսի կենարար մարմինն եւ անգին արիւնն, որով կը ստանային իրենց անյաղթ ուժը, անյողորդ հաստատամտութիւնը, անշէջ սէրը:

Հայ մանուկներ, հաւատարիմ ժառանգորդ եւ նախանձաւոր աւանդապահ մեր հարց ջերմեռանդ եւ կրօնասէր ոգւոյն, ինչո՞ւ ձեր մատաղ հասակին մէջ իսկ չպիտի ընտելանայիք այս խորին խորհրդոյ անսպառ գանձերուն: Թիւ պատարագի ատեն իսկ

քահանային բարձրէն եւ ծածուկէն ըսած աղօթքներուն իմաստիցը թափանցելով աղօթեցէք եւ փորձով պիտի տեսնէք թէ ո՞րպիսի հոգեպարար զգացմամբ պիտի համակուիր:

Օգտուեցէք աշխարհաբար թարգմանութենէն, հետեւեցէք գրաբար բնագրին. ընտրեցէք ձեր սրտին ուզածը, աստղին սիրածը: Կարդացէք կամ երգեցէք. միշտ ձեր կէտ նպատակին թող ըլլայ փնտուել եւ գտնել ձեր յոյսն ու լոյսը, ճանչնալ եւ չսիրել ձեր սէր անուն Յիսուսը:





Առէ՛ք կերպի, այս է մարմին իմ:  
Արբէ՛ք 'ի դմանէ ամենեփին, զի այդ է  
արիւն իմ նորոյ ուխտի:

Մատթ. ԻԶ., 26, 28:

Զայս արասցի՛ս առ իմոյ յիշատակի:

Դուկ. ԻԲ., 9:

Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր. Ալէ-  
լուիա: (Ս. Պատարագ:)

Ես եմ հացն կենաց. որ գայ առ իս ոչ քաղցիցէ.  
եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարաւիցի.  
(Յովհ. 2. 36.)

Մարմին իմ ճշմարիտ կերակուր է եւ արիւն իմ  
ճշմարիտ ըմպելի: (Յովհ. 2. 56.)

Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս  
բնակեացէ եւ ես 'ի նմա: (Յովհ. 2. 57.)

Որպէս սիրեաց զիս Հայրն իմ, եւ ես սիրեցի  
զձեզ. հաստատուն կացէք 'ի սէր իմ:  
(Յովհ. ԺԳ. 9.)

Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս եւ  
զբաժակս՝ ըմպիցէք. զմահն ճեառն պատմիցէք, մին-  
չեւ եկեացէ նա: (Ա. Կորնթ. ԺԱ. 26.)

## ԽՈՐՀՈՒՐԴ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

### ՇԱՐԱԿԱՆ ԴՁ.

Երբ քահանայն զգենու զզգեսն:

Խորհուրդ խորին անհաս անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ 'ի յառազաստն անմատոյց լուսոյն զերապանծ փառօք զգասս հրեղինաց:

Անճառահրաչ զօրութեամբ ստեղծեր զԱդամ պատկեր տիրական, և նազելի փառօք զգեստաւորեցեր 'ի գրախտն Ազննի տեղի բերկրանաց:

Չարչարանօք քո սուրբ Միածնիդ նորոգեցան արարածք ամենայն, և վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ 'ի զգեստ անկողոպտելի:

Անձրեւածին բաժակ հրահոտան, որ հեղար յառաքեալսն 'ի սուրբ վերնատունն, հեղ և 'ի մեզ, Հոգիդ սուրբ Աստուած՝ ընդ պատմութեանին զքո զիմաստութիւնդ:

## ԽՈՐՀՈՒՐԴ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

### ՇԱՐԱԿԱՆ ԴՋ.

ԵՐԲ ԲԱՏԱՆԱՆ ԿՐ ԲԱԳՈՒԻ ՂԳԵՍՐ :

Ո՛վ խորին խորհուրդ, անհասանելի եւ անսկիզբ, որ անմատոյց լուսոյն առագաստին մէջ քու վերին պետութիւնդ, հրեշտակաց դասերը զարդարեցիր գերապանծ փառօր :

Անճառելի եւ հրաշալի զօրութեամբդ ստեղծեցիր Ադամն, իբր քու տիրական պատկերդ եւ նազելի փառաց պատմութեանն իրեն տուիր Ադենի դրախտին, բերկրանաց վայրին մէջ :

Քու Սուրբ Միածնիդ (Յիսուսի) չարչարանքովը նորոգուեցան ամէն արարածներն. եւ մարդս վերստին ստացաւ անմահութիւնն, անկողոպտելի պատմութեանով զարդարուելով :

Անձրեւի նման կրակ տեղացնող բաժակ, որ սուրբ վերնատունն իջար առաքելոց վրայ. մեր վրայ եւս, հոգիդ սուրբ Աստուած, պատմութեանին հետ իջեցուր իմաստութիւնդ :

Տան քում վայելէ սրբութիւն, որ  
զգեցար զվայելչութիւն, սրբութիւն վա-  
ռաց ընդ մէջ քո ածեալ. պատեա զմէջս մեր  
ճշմարտութեամբ :

Որ զարարչագործ բաղուկս քո տարա-  
ծեցեր ընդդէմ աստեղաց, հաստատեա զբա-  
ղուկս մեր կարողութեամբ համբարձմամբ  
ձեռաց առ քեզ միջնորդել :

Իխամամբ թագ 'ի գլուխ՝ պատեացես  
զմխաս և զզգայարանս խաչանիչ ուրարեամբ  
ըստ Ահարոնի ծաղկեալ ոսկեթել 'ի զարդ  
խորանիս :

Բամից բոլորից տիրապէս աստուածպե-  
տական, նափորտապատ սիրով զմեզ զգես-  
տաւորեցեր քում սուրբ խորհրդոյդ լինել  
սպասաւոր :

Թագաւոր երկնաւոր, զիկեղեցի քո  
անչարժ պահեա՛. և զերկրպագուս անուանոց  
քում պահեա՛, 'ի խաղաղութեան :

Քննչ. — Եւ վասն սրբուհոյ Աստուա-  
ծածնին, Տէ՛ր, ընկա՛լ զազաչանս մեր, և  
կեցո՛ւ զմեզ :

Սելէ. — Սուրբ զԱստուածածինն և  
զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ  
Հայր 'ի յերկինս, զի կամեցեալ սղորմես-



Քու տանդ կը վայելէ սրբութիւն, դու որ սուրբ փառօք պարփակուելով մեծավայելչութեամբ շրջապատուեցար, զմեզ զօրացուր ճշմարտութեամբ:

Դու՛ որ արարչագործ բազուկներդ տարածեցիր աստեղաց դէմ, մեր բազուկները զօրացուր կարողութեամբ, որպէսզի մեր ձեռքերը վերցնելով աղօթենք քեզ իբր միջնորդ:

Այս խորանիս գարդին համար՝ Ահարոնին նման ոսկեթելով ծաղկահիւս եւ գլխուն համար բանուած թագով պատէ՛ մեր մտքերը եւ մեր զգայարանքներն ալ՝ խաչանիշ ուրարով:

Համայն արարածոց վրայ տիրող Աստուածպետութիւն, շուրջառին նման շրջապատեցիր զմեզ քու սիրովդ, որպէս զի սպասաւոր ըլլանք քու սուրբ խորհրդոյդ:

Թագաւոր երկնաւոր, անշարժ պահէ՛ քու եկեղեցիդ. եւ քու անուանդ երկրպագուները պահպանէ՛ խաղաղութեան մէջ:

Ք. — Սրբուհի Աստուածածնայ համար, Տէ՛ր, լսէ՛ մեր աղաչանքները եւ ապրեցո՛ւր զմեզ:

Ս. — Սուրբ Աստուածածինն ու ամէն սուրբեմը բարեխօս բռնենք երկնային Հօր քով. որպէս զի կամենալով ողորմի եւ զթալով ապրեցնէ իր

ցի, և զթացեալ կեցուսցէ զարարածս իւր :  
Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ւ և  
ողորմեա՛ :

Քննչ. — Ընկա՛լ Տէր զաղաչանս մեր  
բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին,  
Անարատ ծնողի Միածնի Որդւոյ քոյ, և  
աղաչանօք ամենայն սրբոց քոց (և աւուրս  
չնորհիւ կամ և որոց այսօր է յիշատակ),  
լո՛ւր մեզ Տէր և ողորմեա՛, ներեա՛, քա-  
ւեա՛ և թո՛ղ զմեզս մեր : Արժանաւորեա՛  
գոհութեամբ փառաւորեալ զքեզ ընդ Որդւոյ  
և ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւի-  
տեանս յաւիտենից. Ամէն :

Խոստովանիմ առաջի Աստուծոյ, և Սըր-  
բուհոյ Աստուածածնին, և առաջի ամե-  
նայն սրբոց, և առաջի ձեր, հարք և եղ-  
բարք, զամենայն մեզս զոր գործեալ եմ :  
Քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով,  
և ամենայն մեղօք՝ զոր գործեն մարդիկ,  
մեղայ, մեղայ : Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէք  
վասն իմ յԱստուծոյ զթողութիւն :

Որք Կրճ Էն. — Ողորմեսցի քեզ Աստ-  
ուած հզօրն, և թողութիւն շնորհեսցէ  
ամենայն յանցանաց քոց, անցելոյն և  
այժմուս, և յառաջակայէն փրկեսցէ զքեզ,

արարածները. Ասենակալ Տէր Աստուած մեր, ապրեցուր եւ ողորմէ՛:

Բ. — Տէ՛ր, մեր աղաչանքներն ընդունէ՛ քու Միածին Որդւոյդ անարատ ծնողին սուրբ Աստուածածնայ եւ քու ամէն սրբոցդ բարեխօսութեամբը (եւ այսօրուան շնորհիւ, էմ, եւ որոնց յիշատակն է այսօր), լսէ՛ մեզ Տէ՛ր, եւ ողորմէ՛: Ներէ՛, քաւէ՛ եւ թո՛ղ մեր մեղքերը: Արժանի ըրէ՛ գահութեամբ փառաւորելու զքեզ Որդւոյդ եւ Սուրբ Հոգւոյդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Աստուծոյ եւ Սրբուհի Աստուածածնայ ու ամէն սրբոց առջեւ եւ հայրեր ու եղբայրներ ձեր առջեւ կը խոստովանիմ ամէն գործած մեղքերս: Որովհետեւ մեղք գործեցի խորհրդով, խօսքով ու գործքով եւ մարդոց գործած ամէն մեղքերով. Մեղայ, մեղայ, Ձեզ կ'աղաչեմ, Աստուծմէ թողութիւն խնդրեցէք ինձ համար:

Մօռ էշուհի: Հօրն Աստուած ողորմի քեզ եւ թողութիւն շնորհէ անցեալ եւ արդի քու ամէն յանցանքներուդ. եւ փրկէ զքեզ գալիքէն ու զքեզ հաստատէ ամէն բարի գործոց մէջ եւ

և հաստատեսցէ յամենայն գործս բարիս, և  
և հանգուսցէ զքեզ 'ի հանգերձեալ կեանս.

Քնչ. — Ազատեսցէ \* և զձեզ մարդա-  
սէրն Աստուած, և թողցէ զամենայն յան-  
ցանս ձեր: Տացէ ժամանակ ապաշխարելոյ  
և գործելոյ զբարիս: Ուղղեսցէ և զառաջի-  
կայ կեանս ձեր շնորհօք սուրբ Հոգւոյն,  
հզօրն և ողորմածն, և նմա փառք յաւի-  
տեանս. Ամէն:

Դ. — Յիշեսցիր և զմեզ առաջի ան-  
մահ Գառինն Աստուծոյ:

Քնչ. — Յիշեալ լիջիք առաջի անմահ  
Գառինն Աստուծոյ:

Դ. իր+. Աղաղակեսցէ՛ք առ Տէր ամենայն  
երկիր. ծառայեսցէ՛ք Տեառն ուրախութեամբ:

Մտէ՛ք առաջի նորա ցնծութեամբ. ծա-  
ներո՛ւք զի նա է տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ և ոչ մեք էաք. մեք  
ժողովուրդք և խաչն արօտի նորա:

Մտէ՛ք ընդ զբունս նորա խոստովանու-  
թեամբ, և օրհնութեամբ 'ի յարկս նորա:

Խոստովան եղերո՛ւք Տեառն, և օրհնե-  
ցէ՛ք զանունն նորա:

հանգիստ պարգեւէ քեզ հանդերձեալ կեանքին  
մէջ:

Ք. — Զծեզ եւս ✠ ազատէ մարդասէրն Աստ-  
ուած ու ներէ ձեր ամէն յանցանքները: ժամանակ  
տայ ապաշխարելու եւ բարիք գործելու: Հոգւոյն  
Սրբոյ շնորհքովը ձեր յառաջիկայ կեանքն ուղղէ,  
հզօրն ու ողորմածն. եւ անոր յաւիտեան փառք.  
Ամէն:

Դ. — Զմեզ եւս յիշէ՛ Աստուծոյ անմահ Գառինն  
(Յիսուսի) առջեւ:

Ք. — Յիշուած եղէ՛ք Աստուծոյ անմահ Գառինն  
(Յիսուսի) առջեւ:

Դպրք. Ամէն երկիր ազադակեցէ՛ք Տիրոջ. ծա-  
ռայեցէ՛ք Տիրոջ ուրախութեամբ:

Անոր առջեւ մտէ՛ք ցնծութեամբ. նանչցէ՛ք որ  
անիկա է Տէր Աստուածն:

Անիկա՛ ստեղծեց զմեզ. եւ մենք չկայինք. մենք  
ժողովուրդներն ու անոր արօտի ոչխարները:

Մտէ՛ք խոստովանութեամբ անոր դռնէն, եւ  
օրհնութեամբ անոր յարկին տակ:

Խոստովանեցէ՛ք Տէրը եւ օրհնեցէ՛ք անոր անուէր:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սբէ. — Սուրբ եկեղեցեալս աղաչեացուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ւ և ողորմեա՛:

Քնչ. — Ի մէջ տաճարիս և առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիրդիւ երկիրպագանեմք, զսուրբ, զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո փառաւորիմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Քնչ. — Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Մեկէ. — Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր կեսցո՛ւ և ողորմեա՛ :

Քննչ. — Ի մէջ տաճարիս և առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք, զսուրբ, զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո փառաւորեմք : Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Քննչ. — Մտից առաջի սեզանոյ Աստուծոյ, առ Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ :

Քաղցր է Տէրը, յաւիտեան է անոր ողորմութիւնը, անոր նշմարտութիւնն է ազգէ ազգ:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.  
Ամէն:

Ս. — Սուրբ եկեղեցւոյ միջոցաւ աղաչենք Տիրոջ, որ ասով փրկէ զմեզ մեղքէն եւ ապրեցրնէ իր ողորմութեան շնորհիւ: Մեր ամենակալ Տէր Աստուածն ապրեցո՛ւր զմեզ եւ ողորմէ:

Ք. — Այս տաճարիս մէջ եւ աստուածահանոյ ու պայծառացեալ սուրբ նշաններու եւ սուրբ տեղիս առջեւ խոնարհած ու երկիւղով կ'երկրպագենք. բու սուրբ, հրաշալի ու յաղթող յարութիւնդ կը փառաւորենք: Եւ քեզ կը մատուցանենք օրհնութիւն եւ փառք, Հօր եւ Հոգւոյն Սրբոյ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.  
Ամէն:

Ք. — Կը մտնեմ Աստուծոյ սեղանին առջեւ, Աստուծոյ բով, որ կ'ուրախացնէ իմ մանկութիւնս:



**Սբէի.** — Դատ արա՛ ինձ Աստուած , և  
իրաւ արա՛ ինձ ՚ի գատաստանի իմում :

**Քնչ.** — Յազդէ որ ոչ է սուրբ , ՚ի  
մարդոյ մեղաւորէ , նենգաւորէ փրկեա՛ զիս :

**Սբէի.** — Դու Աստուած հզօրիչ իմ ես ,  
ընդէ՞ր մոռացար զիս , ընդէ՞ր տրտում գնամ  
ես ՚ի նեղել թշնամոյ իմոյ :

**Քնչ.** — Առաքեա՛ , Տէ՛ր , զլոյս քո և  
զճշմարտութիւն քո . զի առաջնորդեսցեն  
ինձ և հանցեն զիս ՚ի լեառն սուրբ և ՚ի  
յարկս քո :

**Սբէի.** — Մտից առաջի սեղանոյ Աս-  
տուծոյ , առ Աստուած՝ որ ուրախ առնէ  
զմանկութիւն իմ :

**Քնչ.** — Խոստովան եղէց քեզ օրհնու-  
թեամբ , Աստուած , Աստուած իմ :

**Սբէի.** — Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն  
իմ , կամ ընդէ՞ր խռովես զիս , յուսա՛ առ  
Աստուած , խոստովանեա՛ նմա , փրկիչ երե-  
սաց իմոց Աստուած է :

**Քնչ.** — Փառք Հօր և Որդւոյ և Հոգ-  
ւոյն Սրբոյ :

**Սբէի.** — Այժմ և միշտ և յաւիտեանս  
յաւիտենից . Ամէն :

Ս. — Դատս տե՛ս Աստուած, եւ իրաւարարս  
եղի՛ր իմ դատաստանիս մէջ:

Ք. — Սուրբ չեղող ազգէն, մեղաւոր, նենգաւոր  
մարդէն փրկէ՛ զիս:

Ս. — Դուն, Աստուած, իմ գորացուցիչս ես.  
Ինչո՞ւ մոռցար զիս. ինչո՞ւ տրտում կ'երթամ ես,  
երբ զիս կը նեղէ իմ թշնամիս:

Ք. — Խրկէ՛, Տէ՛ր, քու լոյսդ եւ քու ճշմար-  
տութիւնդ, որ առաջնորդեն ինձ եւ հանեն զիս սուրբ  
լեռը, քու յարկդ:

Ս. — Կը մտնեմ Աստուծոյ սեղանին առջեւ,  
Աստուծոյ քով, որ կ'ուրախացնէ իմ մանկու-  
թիւնս:

Ք. — Ես օրհնութեամբ կը խոստովանիմ զքեզ.  
Աստուած, իմ Աստուածս:

Ս. — Արդ՝ ինչո՞ւ տրտում ես անձն իմ կամ  
ինչո՞ւ կը իռովես զիս. յուսա՛ Աստուծոյ. զանիկա  
խոստովանէ՛. իմ փնտռած Փրկիչ Աստուածս  
ինքն է:

Ք. — Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
Սրբոյ:

Ս. — Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.  
Ամէն:

Եւ եւս իազազութեան զՏէր ազաչես-  
ցո՛ւք :

Օրհնեսցո՛ւք զՀայր Տեառն մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ  
կալ 'ի տեղւոջ փառաբանութեան, եւ երգել  
զերգս հոգեւորս : Ամենակալ Տէր Աստուած  
մեր, կեցո՛ եւ ողորմեա՛ :

Քնչ. — Ի յարկի սրբութեան եւ 'ի  
տեղւոջ փառաբանութեան, հրեշտակաց  
բնակարանիս և մարդկան քաւարանիս, առա-  
ջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ  
նշանացս եւ սուրբ սեղանոյս, խոնարհեալ  
երկիւղիւ երկիրպագանեմք, զսուրբ, զհրա-  
շալի և զյազթող տէրութիւնդ (ԿՏ յարու-  
թիւնդ, է-Ն) քո փառաւորեմք : Եւ քեզ  
մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ  
Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ. այժմ և միշտ  
և յաւիտեանս յաւիտենից, Ամէն :

### Ե Բ Գ

Դո. — Յայս յարկ նուիրանաց ուխտի  
Տեառն տաճարիս, ժողովեալքս աստա-  
նօր 'ի խորհուրդ պաշտաման պաղատա-  
նաց առաջիկայ սուրբ պատարագիս, խնկօք

Եւ խաղաղութեան համար եւս աղաչենք Տիրոջ:

Օրհնենք մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Հայրն, որ արժանի ըրաւ զմեզ փառաբանութեան տեղը կենայու եւ հոգեւոր երգեր երգելու: Մեր ամենանակալ Տէր Աստուածն, ապրեցուր եւ ողորմէ:

Ք. — Հրեշտակաց այս բնակարանիս եւ մարդկան այս քաւարանիս սրբութեան յարկին տակ եւ փառաբանութեան տեղոյն մէջ, զԱստուած իրենց վրայ կրող պայծառացեալ սուրբ նշաններուն եւ սուրբ սեղանին առջեւ խոնարհելով կ'երկրպագենք երկիւղալից կը փառաւորենք սուրբ, հրաշալի եւ յաղթող տէրութիւնդ (Էմ յարութիւնդ Ե-՝՝Ն): Եւ քեզ կը մատուցանենք օրհնութիւն եւ փառք, Հօր եւ Սուրբ Հոգւոյդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից Ամէն:

### Ե Ր Գ.

Դ. — Հոս այս նուիրական ուխտին յարկին տէրունական տաճարիս մէջ պաղատանաց պաշտամունքին, այս սուրբ պատարագիս խորհուրդին համար ժողովեալներս, անուշահոտ խունկերով խո-

անուշիւք խումբ ատեալ պարեմք 'ի վեր-  
նայարկ սրահն խորանիս : Ուղղութեամբ ըն-  
կա'լ զազօթս մեր , որպէս բուրումն անու-  
շահոտ խնկոց տաշխից և կինամոնաց , և  
զմատուցողքս պահեա' սրբութեամբ միշտ և  
հանապազ քեզ սպասաւորել :

Բարեխօսութեամբ մօր քոյ և կուսի ,  
ընկա'լ զազաչանս քոյ պաշտօնէից :

Որ գերագոյն քան զերկինս պայծառա-  
ցուցեր սուրբ զեկեղեցի արեամբ քո Քրիստոս ,  
և ըստ երկնայնոցն կարգեցեր 'ի սմա  
զդասս առաքելոց և մարգարէից , սուրբ  
վարդապետաց : Այսօր ժողովեալ դասք քա-  
հանայից , սարկաւագաց , դպրաց և կղերի-  
կոսաց , խունկ մատուցանեմք առաջի քո ,  
Տէ'ր , յօ'րինակ ըստ հնումն Չաքարիայ : Ըն-  
կա'լ առ 'ի մէնջ զխնկանուէր մաղթանս ,  
որպէս զպատարացն Աբէլի , զՆոյի և զԱբ-  
րահամու : Բարեխօսութեամբ վերին քո զօ-  
րաց միշտ անշարժ պահեա' զաթոռ հայկազ-  
նեայց :

Խնդա' յոյժ գուտար լուսոյ , մայր սուրբ  
կաթուղիկէ մանկամբք քո Սիոն , զարդար-  
եալ պճնեա' հարսն պանծալի երկնանման  
լուսաճեմ խորան : Ձի օծեալն Աստուած ,  
էնն 'ի յէէն անծախապէս 'ի քեզ միշտ պա-

րանին վերնայարկ սրահը միաբանութեամբ կը պարենք: Հաճութեամբ ընդունէ՛ մեր աղօթքները ազնիւ խունկերու. կինամոններու բուրումին պէս եւ սուրբ պահէ զանոնք մատուցանողներս, որ քեզ սպասաւորենք միշտ եւ հանապազ:

Քու Կոյս Մօրդ բարեխօսութեամբն ընդունէ՛ քու պաշտօնեաներուդ աղաչանքն:

Դուն, Քրիստոս որ քու արեամբդ երկինքէն աւելի պայծառացուցիր սուրբ եկեղեցիս, եւ երկնայիններուն նման ասոր մէջ եւս հաստատեցիր առաքելոց, մարգարէից, սուրբ վարդապետաց դասերը: Այսօր քահանայից, սարկաւազաց, դպրաց եւ կղերիկոսաց դասերը համախմբուելով խունկ կը մատուցանենք քու առջեւդ, Տէր, նախկին Զաքարիայի օրինակին նման. Աբէլի, Նոյի, Արրահամու պատարագին նման ընդունէ՛ մեզմէ խունկով մատուցուած մաղթանքները քու վերին զօրացդ (հրեշտակաց) բարեխօսութեամբ միշտ անշարժ պահէ՛ հայկազնեանց աթոռը:

Խնդա՛ յոյժ. դուստր լուսոյ, մայր սուրբ կաթողիկէ. քու Սիովնի մանուկներովդ. Հարսն պանծալի. երկնանման, լուսափայլ խորանը զարդարէ՛ գեղատեսիլ կերպով: Ռրովհետեւ Օծեալն Աստուած՝ (Յիսուս Գրիստոս)՝ Աստուածն յԱստուծոյ անսպառե-

տարագի. Հօր 'ի հաշտութիւն, մեզ 'ի քա-  
ւութիւն բաշխէ զմարմինն և զարիւն իւր  
սուրբ: Վասն իւր կատարմանն սուրբ տը-  
նօրէնութեան, շնորհէ՛ զթողութիւն կանգ-  
նողի տաճարիս:

Չանապական Կոյսն Մարիամ Աստուա-  
ծին խոստովանի սուրբ եկեղեցի: Ուստի  
տուաւ հացն անմահութեան և բաժակ ու-  
րախարար. տո՛ւք օրհնութիւնն նմա հոգեւոր  
երգով:

Սրի՛ք. — Օրհնեա՛, Տէ՛ր:

Քնչ. — Օրհնեալ թագաւորութիւնն Հօր  
և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ  
և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սրի՛ք. — Եւ եւս խաղաղութեան զՏէր  
աղաչեսցո՛ւք. ընկա՛լ, կեցո՛ և ողորմեա՛:  
Օրհնեա՛ Տէր:

Քնչ. — Օրհ \* նութիւն և փառք Հօր և  
Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և  
յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Յիշատակ Տեանն մերոյ Յիսուսի Քրիս-  
տոսի:

լիօրէն կը պատարագուի միշտ քու մէջդ: Հօրը հե հաշտութեան եւ մեզ՝ քաւութեան համար կը բաշխէ իր սուրբ մարմինն ու արիւնն: Իր սուրբ տնօրէնութեան կատարման համար, տաճարս կանգնողին շնորհէ՛ թողութիւն:

Սուրբ եկեղեցին՝ Աստուածամայր կը խոստովանի անապական՝ Կոյս Մարիամը, որմէ տրուեցաւ անմահութեան հացն եւ ուրախութեան բաժակն: Անոր օրհնութիւն տուէ՛ք հոգեւոր երգով:

Ս. — Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք. — Օրհնեալ ըլլայ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ թագաւորութիւնն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ս. — Եւ խաղաղութեան համար եւս աղաչե՛նք Տիրոջ: Ընդունէ՛, ապրեցո՛ւր եւ ողորմէ՛: Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք. — Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:



Ա.— Եւ եւս խաղաղութեան զՏէր ազախեսցո՛ւք. ընկա՛լ, կեցո՛ւ և ողորմեա՛ :

Ք. — Օրհ \* նութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեանն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի :

Եւ մի ոմն 'ի զինձուորացն տիգաւ խոցեաց զկողս կենարարին, և վաղվաղակի ել արիւն և ջուր :

Աստուած Աստուած մեր, որ զերկնաւոր հացդ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զկերակուրդ ամենայն աշխարհի առաքեցեր Փրկիչ և կեցուցիչ և բարերար, օրհնել և սրբել զմեզ : Ինքնին դու Տէ՛ր օրհ \* նեա՛ և այժմ զառաջագրութիւնս զայս : Ընկա՛լ զսա յերկնային քո սեզանդ : Յիշեա՛ որպէս բարերար և մարդասէր զմատուցողս և վասն որոց մատուցանի : Եւ զմեզ անդատապարտ պահեա՛ 'ի քահանայագործութիւն Աստուածային խորհրդոց քոց : Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծ վայելչութիւն փա-

Ս. — Եւ խաղաղութեան համար եւս աղա-  
չե՛նք Տիրոջ. ընդունէ՛, ապրեցո՛ւր եւ ողորմէ՛ :

Ք. — Օրհ՜ չնութիւն եւ փառք Հօր եւ Որդ-  
ւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յա-  
ւիտեանս յաւիտենից. Ամէն :

Մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուսի Քրիստոսի  
փրկագործ տնօրէնութեան յիշատակին համար :

Եւ զինուորներէն՝ մէկը տէգով Կենարարին  
(Յիսուսի) կողը խոցեց եւ անմիջապէս ելաւ արիւն  
եւ ջուր :

Աստուած, Աստուած մեր, որ երկնաւոր հացը,  
Տէրն մեր Յիսուս Քրիստոսը, բոլոր աշխարհի կե-  
րակուրը դրկեցիր իբր Փրկիչ եւ կեցուցիչ եւ բա-  
րերար զմեզ օրհնելու եւ սուրբ ընելու համար :  
Դուն ինքն, Տէ՛ր, հիմակ եւս օրհ՜ չնէ՛ այս ընծան :  
Ասիկա ընդունէ՛ երկնային սեղանդ : Բարերար ու  
մարդասէրդ, յիշէ՛ թէ՛ մատուցանողը եւ թէ՛ զա-  
նոնք, որոնց համար կը մատուցուի : Եւ քու Աստ-  
ուածային խորհրդոցդ քահանայագործութեան  
մէջ զմեզ պահէ՛ անդատապարտ : Որովհետեւ Հօր  
եւ Որդ չ՛ւոյ եւ Սուրբ Հոգւոյդ : Իսկայն ամենա-  
պատիւ մեծվայելչութիւնը սուրբ է : եւ փա-

ուացդ Հօր եւ Որդ \* ւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ .  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից .  
Ամէն :

Տէր թագաւորեաց վայելչութիւն զգե-  
ցաւ . զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր  
ածաւ :

Հանտատեաց զաշխարհ՝ զի մի սասա-  
նեսցի . պատրաստ է աթոռ քո 'ի սկզբանէ  
յաւիտեանս դու ես :

Ամբարձան գետք , Տէ՛ր , եւ համբարձին  
գետք զձայնս իւրեանց . յարիցեն գետք  
'ի գնաց իւրեանց :

Ի ձայնէ ջուրց բազմաց սքանչելի եղեն  
զբօսանք ծովու :

Սքանչելի ես դու Տէր 'ի բարձունս .  
վկայութեանց քոց մեր յոյժ հաւատացաք :

Տան քում վայելէ սրբութիւն Տէր ,  
ընդ երկար աւուրս :

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
Սրբոյ :

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից .  
Ամէն :

Հոգին սուրբ եկեսցէ \* 'ի քեզ , եւ  
զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի 'ի  
վերայ քո :

ուաւոր. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.  
Ամէն:

Տէրը թագաւորեց, վայելչութիւն զգեցաւ, Տէրը  
զգեցաւ, իր մէջքը պատեց զօրութիւնը:

Աշխարհքը հաստատեց՝ որ չսասանի, քու աթո-  
ռըդ պատրաստ է սկիզբէն, յաւիտեան կաս  
դուն:

Տէ՛ր, գետերը բարձրացան. եւ գետերը բարձրա-  
ցուցին իրենց ձայները. գետերը պիտի ելլեն իրենց  
գնացքին մէջ:

Շատ ջուրերու ձայնէն սքանչելի եղան ծովուն  
գբօսանքները (ալիքները):

Տէ՛ր, սքանչելի ես դուն բարձրները, քու վկա-  
յութիւններուդ շատ հաւատացիներ մենք:

Տէ՛ր. քու տանդ սրբութիւն կը վայելէ, երկայն  
ատեններ:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.  
Ամէն:

Հոգին Սուրբ պիտի գայ՝ քու վրադ, եւ Բար-  
ձրելոյն զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քու վրադ:

Օրհնեալ թագաւորութիւն Հօր եւ  
Որդ \* ւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, Ամէն :

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեա-  
ցո՛ւք, ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛ :

Քնչ. — Օրհ \* նութիւն եւ փառք  
Հօր եւ Որդ \* ւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-  
տենից, Ամէն :

Խաղաղութիւն \* ամենեցուն :

Դռէր. — Եւ ընդ հոգւոյդ քում :

Սրէք. — Աստուծոյ երկրպագեսցո՛ւք :

Դռէր. — Առաջի քո Տէր :

Քնչ. — Տէր Աստուած մեր, որոյ կա-  
րողութիւնդ անքնին է եւ փառքդ անհա-  
սանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է եւ  
զթութիւնդ անբաւ : Դու ըստ առատ մար-  
դասիրութեան քում նայեա՛ 'ի ժողովուրդս  
քո եւ 'ի տաճարս յայս սուրբ : Եւ արա՛  
ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր առատա-  
պէս զողորմութիւն քո եւ զզթութիւն :  
Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ  
պատիւ, այժմ և միշտ, եւ յաւիտեանս յա-  
ւիտենից, Ամէն :

Օրհնեալ ըլլայ Հօր եւ Որդ ✠ ւոյ եւ Հոգւոյն Սրբոյ թագաւորութիւնն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ խաղաղութեան համար եւս աղաչե՛նք Տիրոջ. ընդունէ՛, ապրեցո՛ւր եւ ողորմէ՛:

Ք. — Օրհ ✠ նութիւն եւ փառք Հօր եւ Որդ ✠ ւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն ✠ ամենեցուն.

Դ. — Եւ քու հոգւոյդ համար եւս:

Ս. — Աստուծոյ երկրպագե՛նք:

Դ. — Տէ՛ր, քու առջեւդ:

Ք. — Մեր Տէր Աստուածը, կարողութիւնդ անքննելի է եւ փառքդ անիմանալի. ողորմութիւնդ անչափ է եւ զթութիւնդ անբաւ: Դուն՝ քու առատ մարդասիրութեանդ համեմատ նայէ՛ քու ժողովրդեանդ եւ այս սուրբ տաճարիս: Եւ մեզ ու մեր աղօթակիցներուն առատապէս պարգեւէ՛ քու ողորմութիւնդ եւ զթութիւնդ: Բովհետեւ քեզ կը վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

(ի շաշա-կ) — Տէր Աստուած մեր, կեցո՛ղ զժողովուրդս քո, և օրհնեա՛ր զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեցւոյ քո պահեա՛ր, սրբեա՛ր զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ: Դու զմեզ փառաւորեա՛ր Աստուածային զօրութեամբ քով և մի՛ թողուր գյուսացեալս 'ի քեզ: Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն \* ամենեցուն:

Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգեւել խոստացար: Դու և այժմ զծառայից քոց խնդրուածս՝ առ 'ի յօգուտն կատարեա՛ր, շնորհելով յայսմ յաւիտենիս զգլխութիւն քումդ ճշմարտութեան, և 'ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականսն պարգեւելով: Զի բարերար և մարդասէր ես Աստուած, և քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

(Ծ-Ն-Ն-Ի-Ն). — Մեր Տէր Աստուածը, ապրեցողքը  
քու ժողովուրդդ եւ օրհնէ՛ քու ժառանգութիւնդ,  
Պահէ՛ քու եկեղեցւոյդ ամբողջութիւնը: Սուրբ ըրէ՛  
զանոնք, որ սիրով ողջունեցին քու տանդ վայելչու-  
թիւնը: Դուն քու Աստուածային զօրութեամբդ փա-  
ռաւորէ՛ զմեզ եւ երեսի վրայ մի թողո՛ւր քեզ յու-  
սացողներս: Որովհետեւ քուկդ է կարողութիւնը եւ  
զօրութիւնը եւ փառքը. այժմ եւ միշտ եւ յաւի-  
տեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն ✕ ամենեցուն:

Դուն որ այս ընկերակցութեամբ եւ միաբե-  
րան աղօթելը սորվեցուցիր մեզ ամենուս, եւ քու  
անուամբդ երկու երեք հոգի միաբերան աղօթող-  
ներուն խնդրուածքը պ սրգեւել խոստացար: Հիմակ  
եւս քու ծառաներուդ խնդրուածքները կատարէ՛  
օգտակարին համար, այս աշխարհիս մէջ շնորհելով  
քու նշմարութեանդ գիտութիւնը եւ հանդերձե-  
լոյն մէջ պարգեւելով յաւիտենական կեանքը: Որով-  
հետեւ բարերար եւ մարդասէր Աստուած ես, եւ քեզ  
կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



## ՃԱՇՈՒ ՓՈՆ ԵՒ ՇԱՐԱԿԱՆ

Քննչ. — (Խորհրդաճառ.) Տէ՛ր Աստուած մեր, որ կարգեցիր յերկինս զզատս եւ զինուորութիւնս հրեշտակաց եւ հրեշտակապետաց՝ ՚ի սնրասաւորութիւն փառաց քոց: Արա՛ այժմ՝ ընդ մուտս մեր մտանել եւ սրբոց հրեշտակաց, եւ լինել պաշտօնակից մեզ եւ փառաբանակից քումզ բարերարութեան:

Սրկէ. — Օրհնեա՛ Տէ՛ր:

Քննչ. — Զի քս է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս, Ամէն:

Սրկէ. — Պոստիսումէ՛:

Դպ. — Սուրբ Աստուած, սուրբ եւ հրգօր, սուրբ եւ անմահ, ողորմեա՛ մեզ (Երեջ՝ կրկնեա):

Քննչ. — (Ի շաճակ) — Աստուած սուրբ, որ ՚ի սուրբս հանգուցեալ ես, եւ երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ, եւ քերովբէք փառաբանեն, եւ ամենայն զօրութիւնքն քեզ երկիր պազանեն: Որ ՚ի չգոյէ ՚ի գոյ ամեր զամենայն արարածս: Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում եւ նմանու-

## ՃԱՇՈՒ ՓՈԽ ԵՒ ՇԱՐՍԱԿԱՆ

Ք. — (Հ.Յ.Ն.Ն.Ն.) — Մեր Տէր Աստուածն, որ քու փառացի սպասաւորութեան համար երկինքի մէջ հատատեցիր հրեշտակաց եւ հրեշտակապետաց դասերն ու զինուորութիւնը, Հիմակ մեր սպասաւորելու մտած ատենը մտցո՛ւր նաեւ սուրբ հրեշտակներն, որպէս զի մեզ ըլլան պաշտօնակից եւ քո բարերարութեանդ ալ փառաբանակից:

Ս. — Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք. — Որովհետեւ քուկդ է կարողութիւնը եւ զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ս. — Պռօսխումէ՛: (Մտիկ ընենք):

Դ. — Սուրբ Աստուած. սուրբ եւ հզօր. սուրբ եւ անմահ ողորմէ՛ մեզ (Երէջ՝ Իրէ՛ե):

Ք. — (Հ.Յ.Ն.Ն.Ն.) — Սուրբ Աստուած, որ կը հանգչիս սրբոց մէջ եւ սերովբէները երեքսրբեան ծայնով կը գովեն զքեզ եւ քերովբէները կը փառաբանեն եւ ամէն զօրութիւնները քեզ կ'երկրպագեն: Դուն՝ որ ոչինչէն գոյացուցիր ամէն արարածները: Դուն՝ որ մարդս ստեղծեցիր քու պատկերիդ եւ նմա-

թեան , և ամենայն շնորհիւ քով զնա զար-  
գարեցեր , և ուսուցեր խնդրել զիմաստու-  
թիւն և զգօնութիւն , և ոչ անտես արա-  
րեր զմեղուցեալն , այլ եղեր 'ի վերայ նորա  
զապաշխարութիւն փրկութեան : Որ արժա-  
նի արարեր զմեղ նուաստացեալ և զանարժան  
ծառայքս քո 'ի ժամուս յառմիկ կալ առաջի  
փառաց սրբութեան սեղանոյ քոյ , և զօրի-  
նաւոր երկրպագութիւն և փառաբանութիւն  
մատուցանել քեզ : Դու Տէ՛ր , ընկա՛լ 'ի բե-  
րանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնու-  
թիւն , և պահեա՛ զմեզ քոյին քաղցրու-  
թեամբ : Թո՛ղ մեզ զամենայն յանցանս մեր  
զկամայ և զակամայ : Սրբեա՛ դճողի , զմիտս  
և զմարմինս մեր և շնորհեա՛ 'ի սրբութեան  
պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մե-  
րոց , բարեխօսութեամբ սրբունւոյ Աստուա-  
ծածնին և ամենայն սրբոց քոց , որք յաւի-  
տենից քեզ բարեհաճոյացան : Զի սուրբ ես  
Տէ՛ր Աստուած մեր , և քեզ վայելէ փառք ,  
իշխանութիւն և պատիւ , այժմ և միշտ և  
յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Սբկէ : — Եւ եւս խաղաղութեան զՏէ՛ր  
ազաչեցո՛ւք :

նութեանդ համեմատ ու զինքը զարդարեցիր քու  
ամէն շնորհքովդ եւ իմաստութիւն ու զգօնութիւն  
փնտռել սորվեցուցիր. եւ մեղանչելէն յետոյ ան-  
տես չըրիր, հապա անոր վրայ դրիր փրկութեան  
ապաշխարութիւնը: Դուն որ արժանի ըրիր զմեզ  
քու նուաստացեալ ու անարժան ծառաներս այս  
ժամուս քու փառաց սրբութեան սեղանիդ առջեւ  
կենալու եւ օրինաւոր երկրպագութիւնն ու փառա-  
բանութիւնը մատուցանելու: Դուն, Տէ՛ր, ընդունէ՛  
մեր՝ մեղաւորայս բերնէն երեքսրբեան օրհնութիւնն  
եւ պահէ՛ քու քաղցրութեամբդ: Ներէ՛ մեզ մեր ա-  
մէն կամաւոր եւ աշամայ յանյանքները: Սուրբ ըրէ՛  
մեր հոգին, միտքն ու մարմինն, եւ շնորհէ՛, որ մեր  
կենաց ամէն օրերը սրբութեամբ պաշտօն մատու-  
ցանենք քեզ, բարեսօսութեամբ Սուրբ Աստուա-  
ծածնայ եւ քու ամէն սրբոցդ, որք յաւիտենից հա-  
նելի եղան քեզ. Որովհետեւ Դուն, մեր Տէ՛ր Աստ-  
ուածը սուրբ ես եւ քեզ կը վայելէ փառք, իշխա-  
նութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից. Ամէն:

Ս.—Եւ խաղաղութեան համար եւս աղաչե՛նք  
Տիրոջ:

Դու. — Տէ՛ր ողորմա՛ :

Սրի՛ք. — Վասն խաղաղութեան մենայն  
աշխարհի և հաստատութեան Սրբոյ Եկե-  
ղեցւոյ. զՏէր աղաչեսցո՛ւք :

Դու. — Տէ՛ր ողորմեա՛ :

Սրի՛ք. — Վասն ամենայն սուրբ և ուղ-  
ղափառ եպիսկոպոսաց. զՏէր աղաչեսցո՛ւք :

Դու. — Տէ՛ր ողորմեա՛ :

Սրի՛ք. — Վասն Սրբազան Պապին մե-  
րոյ Տեառն (այս ա՛նու՛ն) : Եւ պատրիարքին ,  
կամ Արքեպիսկոպոսին կամ Եպիսկոպոսին  
մերոյ Տեառն (այս ա՛նու՛ն). զՏէր աղաչեսցո՛ւք :

Դու. — Տէ՛ր ողորմեա՛ :

Սրի՛ք. — Վասն վարդապետաց , քահա-  
նայից , սարկաւազաց , զպրաց , և ամենայն  
ուխտի մանկանց եկեղեցւոյ. զՏէր աղաչես-  
ցո՛ւք :

Դու. — Տէ՛ր ողորմեա՛ :

Սրի՛ք. — Վասն բարեպաշտ թագաւորաց  
և աստուածասէր իշխանաց , զօրավարաց և  
զօրաց նոցին. զՏէր աղաչեսցո՛ւք :

Դու. — Տէ՛ր ողորմեա՛ :

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛:

Ս.—Ամբողջ աշխարհի խաղաղութեան եւ սուրբ եկեղեցւոյ հաստատութեան համար աղաչե՛նք Տիրոջ՝

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛:

Ս.—Ամէն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսոց համար աղաչե՛նք Տիրոջ:

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛:

Ս.—Մեր Սրբազան Պապին Տեառն (այս անգամ) եւ մեր պատրիարքին կամ Արքեպիսկոպոսին կամ Եպիսկոպոսին Տեառն (այս անգամ) համար աղաչե՛նք Տիրոջ:

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛:

Ս.—Վարդապետաց, քահանայից, սարկաւազաց, դպրաց եւ եկեղեցւոյ ամէն ուխտեալ մանկանց համար աղաչե՛նք Տիրոջ:

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛:

Ս.—Բարեպաշտ թագաւորաց, աստուածասէր իշխանաց, զօրավարաց եւ անոնց զօրաց համար աղաչե՛նք Տիրոջ:

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛:

Սբէ՛հ. — Վասն նոգւոցն հանգուցելոց ,  
որք ճշմարիտ և ուղիղ հաւատով 'ի Քրիստոս  
ննջեցին . զՏէր աղաչեսցո՛ւք :

Դպ. — Յիշեա՛ Տէ՛ր և ողորմե՛ա :

Սբէ՛հ. — Եւ եւս և վասն միաբանու-  
թեան ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ .  
զՏէր աղաչեսցո՛ւք :

Դպ. — Տէ՛ր ողորմեա՛ :

Սբէ՛հ. — Զանձինս մեր և զմիմեանս  
Տեառն Աստուծոյ ամենակալից յանձն արաս-  
ցո՛ւք :

Դպ. — Քեզ Տեառնդ յանձն եղիցո՛ւք :

Սբէ՛հ. — Ողորմեա՛ց մեզ Տէ՛ր Աստուած  
մեր , ըստ մեծի ողորմութեան քում : Ասաս-  
ցո՛ւք ամենեքեան միաբանութեամբ :

Դպ. — Տէ՛ր ողորմեա՛ , Տէ՛ր ողորմեա՛  
Տէ՛ր ողորմեա՛ :

Սբէ՛հ. — Օրհնեա՛ Տէ՛ր :

Քնչ. — (Ի շաշուհ) — Տէր Աստուած  
մեր , զբազկատարած զաղաչանս ծառայից  
քոց վերընկայցիս , և ողորմեսցիս ըստ մեծի  
ողորմութեան քում : Զգթութիւն քո ա-  
ռաքեա՛ 'ի վերայ մեր եւ ամենայն ժողո-

Ս.—Ճշմարիտ եւ ուղիղ հաւատով 'ի Քրիստոս  
ննչող հանգուցեալ հոգւոց համար աղաչե՛նք Տի-  
րոջ։

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛։

Ս.—Եւ մեր ճշմարիտ սուրբ հաւատքին միաբա-  
նութեան համար եւս աղաչե՛նք Տիրոջ։

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛։

Ս.—Մեր անձերը եւ մէկզմէկ յանձնե՛նք ամե-  
նակ սլ Տէր Աստուծոյդ։

Դ.—Քեզ, Տէ՛ր Աստուծոյդ կը յանձնուինք։

Ս.—Մեր Տէ՛ր Աստուածը, մեզ ողորմէ՛ քու մեծ  
ողորմութե անդ համեմատ։ Մենք ամէնքնիս միաբա-  
նութեամբ քսե՛նք։

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ո-  
ղորմէ՛։

Ս.—Օրհնէ՛, Տէ՛ր։

Ք.—(Մարտիրոս) —Մեր Տէր Աստուածը ընդունէ՛  
քու ծառաներուդ բողոքներնին տարածելով ըրած  
աղաչանքները եւ ողորմէ՛ անոնց քու մեծ ողոր-  
մութեանդ համեմատ։ Քու զթութիւնդ զրկէ՛ մեր եւ



վըրդեանս, որք ակն ունին առ 'ի քէն ա-  
ռատ ողորմութեանդ :

Քնչ. — (Ի յայն) — Զի ողորմած և մար-  
դասէր ես, Աստուած գոլով, և քեզ վայելէ  
փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և  
միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Ճ Ա Շ Ո Ի Գ Ի Ր Ք

Սբկէ. — Օրթի :

Քնչ. — Խաղաղութիւն \* ամենեցուն :

Դպ. — Եւ ընդ հոգւոյդ քում :

Սբկէ. — Երկիւղածութեամբ լուարո՛ւք .

Քնչ. — (Կ՛ճ) Սբկէ. — Սրբոյ աւետա-  
րանիս որ ըստ (Մատթեոսի) :

Դպ. — Փա՛ռք քեզ Տէ՛ր Աստուած մեր :

Սբկէ. — Պրօսխումէ՛ :

Դպ. — Ասէ Աստուած :

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ամէն+, — Փա՛ռք քեզ Տէ՛ր Աստուած մեր :

Հաւատամք 'ի մի Աստուած Հայրն  
ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի,  
երեւելեաց եւ աներեւութից : Եւ 'ի մի  
Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ,

ամէն այս ժողովրդեան վրայ, որ կը սպասեն քեզմէ տրուելիք աւատ ողորմութեանդ:

Ք.—(Բարձրէն)— Որովհետեւ Աստուած ըլլալով, ողորմած ու մարդասէր ես եւ քեզ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

### Ճ Ա Շ Ո Ի Գ Ի Բ Ք

Ա.—Օրթի: ( Ոուղիղ կենանք )

Ք.—Խաղաղութիւն ✱ ամենեցուն:

Դ.—Եւ քու հոգւոյդ համար եւս:

Ա.—Երկիւղածութեամբ մտիկ ըրէ՛ք:

Ք. Կ՛մ Ա.—(Մարտի) Սուրբ աւետարանէն:

Դ.—Փա՛ռք քեզ, Տէ՛ր Աստուած մեր:

Ա.—Պաշտօնովէ՛: (Մտիկ ընեն՛ք):

Դ.—Կ'ըսէ Աստուած:

### Ա Ի Ե Տ Ա Բ Ա Ն

Ահէնչը հեռուէն.— Փա՛ռք քեզ, Տէ՛ր Աստուած մեր:

Կը հաւատանք 'ի մի Աստուած, Հայր ամենակալ, որ ստեղծեց երկինքն ու երկիրն, Ըրեւելի՛ս եւ

ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, նախ քան  
զամենայն յաւիտեանս: Աստուած յԱստուծոյ  
լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ  
ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն  
համագոյակից, Հօր, որով ամենայն ինչ եղև  
յերկինս և 'ի վերայ երկրի՝ երեւելիք և ա-  
ներեւոյթք: Որ յազազս մեր մարդկան և  
վասն մերոյ փրկութեան իջալ 'ի յերկնից՝  
մարմնացաւ, մարդացաւ (Զ-նը կրկնեցէ) ծնաւ  
կատարելապէս 'ի Մարեմայ սրբոյ Կուսէն՝  
Հոգւովն Սրբով: Որով էառ մարմին, հոգի և  
միտս և զամենայն որ ինչ է 'ի մարդ՝ ճշմար-  
տապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչ-  
եալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ,  
ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ  
աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փա-  
ռօք Հօր՝ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս:  
Որոյ թագաւորութեանն ոչ քո վախճան: Հա-  
ւատամք և 'ի Սուրբ Հոգին՝ յանեղն և  
'ի կատարեալն, որ 'ի Հօրէ և յՈրդւոյ  
բղիսի: Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարդա-  
րէս և յաւետարանս: Որ էջն 'ի Յորդա-  
նան, քարոզեաց զառաքեալն, և բնա-

աներեւոյթ բաներն: Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Աստուծոյ Որդիւ միածին չօր Աստուծմէ ծնած յառաջ բան զամենայն յաւիտեանս: Աստուծմէ Աստուած, լոյսէ լոյս, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստուծմէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքը՝ չօր համագոյակից, որով երկինքն ու երկրի վրայ ստեղծուեցաւ ամէն բան, երեւելիներն ու աներեւոյթները: Որ մեզ մարդոցս ու մեր փրկութեան համար երկինքէն իջնելով մարմնացաւ, մարդացաւ (ԿԵ ԶԻՐՊԵՐԵՒՆՆԵՐ), Սուրբ Կոյս Մարիամէն կատարելապէս ծնաւ չօրով Սրբով: Որով առաւ մարմին, հոգի եւ միտք եւ ինչ որ կայ մարդուս մէջ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծիքով: Չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, երրորդ օրն յարութիւն առաւ, երկինք ելլելով նոյն մարմնով նստաւ չօր աջ կողմը: Նոյն մարմնով ու չօր փառքով պիտի գայ դատելու համար կենդանիներն ու մեռելներն: Որու թագաւորութեանը վախճան չիկայ: Կը հաւատանք նաեւ անեղ ու կատարեալ Սուրբ չօրոյն, որ կը բղխի չօրմէ եւ Որդիէն: Որ խօսեցաւ օրինաց մէջ, մարգարէներու բերնով եւ սուրբ աւետարանի մէջ: Որ իջաւ Յորդանան, քարոզեց առաքեալը եւ բնակեցաւ սուրբերուն մէջ:

կեցաւ 'ի սուրբսն: Հաւատամք և 'ի մի միայն  
յընդհանրական և յառաքելական սուրբ ե-  
կեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարու-  
թիւն՝ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց:  
Ի յարութիւն մեռելոց: Ի դատաստանսն յա-  
ւիտենից հոգւոց և մարմնոց: Յարքայութիւն  
երկնից: Եւ 'ի կեանս յաւիտենականս:

Իսկ որք ասենն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր  
Որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր Սուրբ  
Հոգի. կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ է-  
ութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ  
զՍուրբ Հոգին, և թէ փոփոխելի են կամ այ-  
լայլելի, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և  
առաքելական եկեղեցի:

Սրկէ.—Օրհնեա՛ Տէր:

Քնչ.—Իսկ մեք փառաւորեսցուք որ յա-  
ռաջ քան զյաւիտեանս երկիր պազանելով  
սրբոյ Երրորդութեանն և մի Աստուածու-  
թեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.  
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Փողովո՛ւրդն.—Ամէն:

Սրկէ.—Եւ ևս խաղաղութեան զՏէր ա-  
զաչեսցո՛ւք:

Կը հաւատանք նաեւ մի միայն ընդհանրական ու առաքելական սուրբ եկեղեցւոյն: Մէկ մկրտութեան, ապաշխարութեան՝ քաւութեան եւ մեղաց թողութեան: Մեռելոց յարութեան: Հոգւոց եւ մարմնոց յաւիտեան դատաստանին: Երկնից արքայութեան: Յաւիտենական կեանքին:

Իսկ զանոնք, որ կ'ըսեն, թէ եղած է ատեն մը որ Որդին չկար, կամ եղած է ատեն մը որ Հոգին Սուրբ չկար, Կամ անոնք ոչինչէն ստեղծուեցան. կամ կ'ըսեն թէ՛ Որդին Աստուած ու Հոգին Սուրբ ուրիշ էութենէ եղած են. եւ կամ փոփոխելի եւ այլայլելի են, այնպիսիները կը նզովէ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցին:

Ս.—Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք.—Իսկ մենք ամէն ժամանակներէ առաջ եղողը կը փառաւորենք երկրպագելով Սուրբ Երրորդութեան ու մէկ Աստուածութեանը Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ժողովուրդն. — Ամէն:

Ս.—Եւ խաղաղութեան համար եւս աղաչենք Տիրոջ:

Դպ. — Տէ՛ր , ողորմեա՛ :

Աբիէ. — Եւ եւս հաւատով աղաչեսցո՛ւք  
և խնդրեսցո՛ւք 'ի Տեառնէ Աստուծոյ և 'ի  
Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՝ 'ի ժա-  
մուս պաշտաման և աղօթից : Զի արժանի  
ընդունելութեան արասցէ , լուիցէ ձայնի ա-  
ղաչանաց մերոց , ընկալցի զխնդրուածս սրբ-  
տից մերոց , թողցէ զյանցանս մեր , ողորմեսցի  
'ի վերայ մեր : Աղօթք մեր և խնդրուածք  
յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրու-  
թեան նորա : Եւ նա տացէ մեզ միաբան  
միով հաւատով , արդարութեամբ վաստա-  
կել 'ի գործս բարիս : Զի զողորմութեան ըզ-  
չնորհան իւր արասցէ 'ի վերայ մեր , Տէրն  
ամենակալ կեցուցէ , և ողորմեսցի :

Դպ. — Կեցո՛ , Տէ՛ր :

Աբիէ. — Զժամս սուրբ պատարագիս և  
զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցա-  
նել հաւատով 'ի Տեառնէ խնդրեսցո՛ւք :

Դպ. — Շնորհեա՛ , Տէ՛ր :

Աբիէ. — Զհրեշտակ խաղաղութեան պա-  
հապան անձանց մերոց 'ի Տեառնէ խնդրես-  
ցո՛ւք :

Դպ.—Շնորհեա՛ , Տէ՛ր :

Սբկէ.—Չքաւութիւն և զթողութիւն  
յանցանաց մերոց 'ի Տեառնէ խնդրեսցո՛ւք :

Դպ.—Շնորհեա՛ , Տէ՛ր :

Սբկէ.—ՉՍրբոյ խաչին մեծ և կարող զօ-  
րութիւնն յօգնականութիւն անձանց մերոց  
'ի Տեառնէ խնդրեսցո՛ւք :

Դպ.—Շնորհեա՛ , Տէ՛ր :

Սբկէ.—Եւ եւս և վասն միաբանութեան  
ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէր ա-  
ղաչեսցո՛ւք :

Դպ.—Տէ՛ր , ողորմեա՛ :

Սբկէ.—Չանձինս մեր և զմիմեանս Տեառն  
Աստուծոյ ամենակալիդ յանձն արասցո՛ւք :

Դպ.—Քեզ Տեառնդ յանձն եղիցո՛ւք :

Սբկէ.—Ողորմեա՛ց մեզ Տէ՛ր , Աստուած  
մեր , ըստ մեծի ողորմութեան քում : Ասաս-  
ցո՛ւք ամենեքեան միաբանութեամբ :

Դպ.—Տէ՛ր , ողորմեա՛ , Տէ՛ր , ողորմեա՛ ,  
Տէ՛ր , ողորմեա՛ :



Դ. — Շնորհէ՛, Տէ՛ր:

Ս. — Մեր յանցանաց քաւութիւնն ու թողութիւնը խնդրե՛նք Տիրոջմէ:

Դ. — Շնորհէ՛, Տէ՛ր:

Ս. — Սուրբ խաչին մեծ ու կարող զօրութիւնը մեր անձանց օգնականութեանը համար խնդրե՛նք Տիրոջմէ:

Դ. — Շնորհէ՛, Տէ՛ր:

Ս. — Եւ մեր ճշմարիտ ու սուրբ հաւատքին միաբանութեան համար եւս աղաչե՛նք Տիրոջ:

Դ. — Տէ՛ր, ողորմէ՛:

Ս. — Մեր անձերն ու մէկզմէկ յանձնե՛նք ամենակալ Տէր Աստուծոյ:

Դ. — Քեզ, Տէր Աստուծոյդ կը յանձնուինք:

Ս. — Մեր Տէր Աստուածը մեզ ողորմէ՛ քու մեծ ողորմութեանդ համեմատ: Ամէնքնիս ըսե՛նք միաբանութեամբ:

Դ. — Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

Քննչ. — (Ի շաշն) — Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ և առատ պարգեւօք բարերարութեան քոյ: Որ դու քոյին կամաւ 'ի ժամուս յայտմիկ համբերեցեր չարչարանաց, խաչի և մահու յաղագս մեղաց մերոց. և պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ երանելի առաքելոցն: Հաղորդս արա՛ և զմեզ Տէ՛ր, ազաչեմք զքեզ՝ աստուածային պարգեւացդ, թողութեան մեղաց և ընդունելութեան Հոգւոյդ Սրբոյ:

Սրի՛ք. — Օրհնեա՛ Տէ՛ր:

Քննչ. — (Ի յայն) — Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն \* ամենեցուն:

Գղ. — Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրի՛ք. — Աստուծոյ երկրպագեսցո՛ւք:

Գղ. — Առաջի քս Տէր:

Քննչ. — Խաղաղութեամբ քով Քրիստոս Փրկիչ մեր, որ 'ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո՛ զմեզ եւ

Ք. — (Գործք. Գլ. Գ.) — Մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս Քրիստոս, որ մեժ ես ողորմութեամբդ եւ առատ քու բարերարութեան պարգեւներովդ, մը դուն կամբովդ այս ժամուս համբերեցիր չարչարանաց, խաչի եւ մահուան մեր մեղաց համար, եւ Հոգւոյդ Սրբոյ պարգեւները առատօրէն շնորհեցիր երանելի առարելոց, Տէ՛ր, քեզ կ'աղաչենք, զմեզ եւս մասնակեց ըրէ՛ աստուածային պարգեւներուդ, մեղաց թողութեան եւ Հոգւոյն Սրբոյ ընդունելութեան:

Ս. — Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք. — (Բարեբեռ) Որպէս զի արժանի ըլլանք գոհութեամբ փառաւորելու զքեզ Հօր եւ Սուրբ Հոգւոյդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն ✠ ամենեցուն:

Դ. — Եւ քու հոգւոյդ համար եւս:

Ս. — Աստուծոյ երկրպագենք:

Դ. — Տէ՛ր, քու առջեւ:

Ք. — Մեր Փրկիչը Քրիստոս, ամէն մտքէ ու խօսքէ վեր եղող քու խաղաղութեամբդ զօրացո՛ւր զմեզ եւ անվախ պահէ՛ ամէն չարէ: Հաւասարցո՛ւր զմեզ քու

աներկիր զ պահեա՛ յամենայն շարէ : Հաւա-  
սարեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս  
քո , որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ  
երկիր պագանեն : Վասնզի ամենասուրբ Ար-  
քորդութեանդ վայելէ փառք , իշխանու-  
թիւն և պատիւ , այժմ և միշտ և յաւիտե-  
կանս յաւիտենից . Ամէն :

Օրհնեալ Տէր մեր ☩ Յիսուս Քրիստոս :

Գղ . — Ամէն :

Արի՛ք . — Օրհնեա՛ Տէ՛ր :

Քնչ . — Տէր Աստուած օրհ ☩ նեցէ զա-  
մենեւեանդ :

Գղ . — Ամէն :

Արի՛ք . — Մի սք յերեխայից , մի սք ՚ի  
թերահաւատից , և մի սք յապաշխարոզաց և  
յանձաքրից մերձեցի յաստուածային խոր-  
հուրդս :

Գղ . — Մարմին տէրունական և արիւն  
փրկչական կացցէ առաջի : Երկնային գո-  
րութիւնքն յաներեւոյթս երզեն և ասեն  
անհանգիստ բարբառով , սուրբ , սուրբ ,  
սուրբ , Տէր գօրութեանց :

Արի՛ք . — Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աս-  
տուծոյ մերոյ , զպի՛րք , ձայնիւ քաղցրու-  
թեամբ զերգս հոգեւօրս :

ճշմարիտ երկրպագուներուդ հետ, որ հոգևով ու ճշմարտութեամբ քեզ կ'երկրպագեն: Վասն զի ամենատուրբ երրորդութեանդ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Օրհնեալ Տէր մեր ✠ Յիսուս Քրիստոս:

Դ. — Ամէն:

Ս. — Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք. — Տէր Աստուած օրհնէ՛ ամէնքդ ալ:

Դ. — Ամէն:

Ս. — Երեխաներէն (չմկրտուածներէն), թերահաւատներէն եւ ապաշխարողներէն ու անմաքուրներէն եւ ոչ մէկը մօտենայ աստուածային խորհրդոյս:

Դ. — Տէրունական մարմինն ու փրկչական արիւնը մեր առջեւ պիտի կենայ, երկնային օրութիւններն (հրեշտակներն) աներեւութաբար կ'երգեն ու անդադար ձայնով կ'ըսեն. Սուրբ. Սուրբ. Սուրբ. Տէր զօրութեանց:

Ս. — Դպիրներ, մեր Տէր Աստուծոյն քաղցր ձայնով հոգեւոր երգեր ու սաղմոս ըսէ՛ք:

Ծննդ. } Դպ. — Բազմութիւնք հրեշտակաց,  
 Աւետ. } և զօրաց երկնաւորաց իջեալ 'ի  
 Ածած. } յերկնից ընդ միածին թագաւորին: Ուրք  
 երգէին և ասէին, սա է Որդին Աստուծոյ:  
 Ամենեքեան ասացո՛ւք, ուրախ լերո՛ւք եր-  
 կինք, և ցնծացեն հիմունք աշխարհի. զի  
 Աստուածն յաւիտենական 'ի յերկրի երեւե-  
 ցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցու-  
 ցէ զանձինս մեր:

Կիրակ. } Հրեշտակային կարգաւորութեամբ  
 Եկեղ. } լցեր Աստուած զքո սուրբ զեկե-  
 Հրեոս. } ղեցի: Հազարք հազարաց հրեշտակապետք  
 կան առաջի քո, և բիւրք բիւրոց հրեշ-  
 տակք պաշտեն զքեզ Տէր: Եւ 'ի մարդկանէ  
 հաճեցար ընդունել զօրհնութիւնս ձայնիւ  
 խորհրդականաւ Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր  
 զօրութեանց:

Քննչ. — (Ի ՁՁՁ-ի) — Ոչ ոք արժանի է  
 յրմբոնելոցս մարմնաւոր ախտիւք և ցան-  
 կութեամբ մատչիլ 'ի սեղան քո, կամ սպա-  
 սաւորել արքունական փառաց քոց. քանզի  
 պաշտել 'զքեզ' մեծ և ահաւոր երկնաւոր զօ-  
 րութեանցդ իսկ է: Սակայն վասն անշափ

Գ. — Հրեշտակաց եւ երկնային զօրաց բազմութիւնը երկինքէն իշնելով Միածին Թագաւորին հետ՝ կ'երգէին եւ կ'ըսէին. Ասիկա է Որդին Աստուծոյ, Ամէնքնիս ըսե՛նք. Ուրախ եղի՛ր երկինք եւ ցնծացէ՛ր աշխարհի հիմունքը: Որովհետեւ յախտեճական Աստուածն երեսցաւ երկրի վրայ եւ ժարդոց հետ պտտեցաւ, որպէս զի փրկէ մեր հոգիները:

Հրեշտակային կարգաւորութեամբ լցիր, Աստուած, քու սուրբ եկեղեցիդ: Հազար հազարաւոր հրեշտակապետներ կան քու առջեւդ եւ բիւր բիւրաւոր հրեշտակներ կը պաշտեն զքեզ, Տէ՛ր: Մարդոցմէ եւս հասնեցար ընդունելու օրհնութիւններ խորհրդական ձայնով. Սուրբ. Սուրբ. Սուրբ. Տէր զօրութեանց:

Ք. — (Զ-Զ-Ի-Է) Մարմնաւոր ախտով ու ցանկութեամբ բռնուողներէս եւ ոչ մէկն արժանի է քու սեղանիդ մօտենալու, կամ քու Թագաւորական փառացդ սպասաւորելու: Որովհետեւ զքեզ պաշտելը՝ քու երկնային զօրութեանցդ իսկ մեծ ու ահաւոր է: Սակայն քու չափ չունեցող բարերարութեանդ համար Դուն, անբովանդակելի Բանդ Հօր (Յիսուս Քրիստոս)

բարերարութեան քոյ, անպարագրելի Բանդ  
Հօր, եղեր լարդ և քահանայապետ մեր  
երեւեցար: Եւ իբր Տէր ամենեցուն՝ այսմ  
սպասաւորութեան և անարիւն զենման զքա-  
հանայութիւն աւանդեցեր մեզ: Վասն զի  
դու ես Տէր Աստուած մեր, որ տիրես երկ-  
նաւորաց և երկրաւորաց: Որ 'ի վերայ քե-  
րովբէական աթոռոյ բաղմիս, սերովբէից  
Տէր և թագաւոր Իսրայէլի: Որ միայն սուրբ  
ես, և 'ի սուրբս նանգուցեալ: Աղաչեմ  
զքեզ, միայն բարերար, նայեա՛ յիս 'ի մե-  
ղուցեալ և յանպիտան ծառայս քո, և սրբ-  
բեա՛ զհոգի և զմիտս իմ յամենայն պղծու-  
թենէ չարին: Եւ բաւականացո՛ զիս զօ-  
րութեամբ Սուրբ Հոգւոյդ, որ զպեցեալ եմ  
զքահանայական շնորհ, կալ առաջի սրբոյ  
սեղանոյս, և քահանայագործել զքո անա-  
րատ մարմինդ և զպատուական արիւնդ:  
Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ, մաղ-  
թեմ՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն,  
և մի՛ մերժեր զիս 'ի ծառայից քոց: Այլ  
արժանի արա՛ մատուցանել քեզ զընծայս  
զայս՝ յինէն 'ի մեղուցեալ և յանարժան ծա-  
ռայէս քումմէ: Վասն զի դու ես՝ որ մա-  
տուցանես և մատչիս և ընդունիս և տաս,



մարդ եղար եւ մեր քահանայապետն երեւցար, եւ իբր ամենուն Տէր՝ այս սպասաւորութեան ու առանց արիւնի զենման (պատարագին) քահանայութիւնն աւանդեցիր մեզ: Վասն զի դուն ես մեր Տէր Աստուածը, որ կը տիրես երկնաւորաց ու երկրաւորաց վրայ: Որ քերովբէական աթոռոյ վրայ կը բազմիս, դուն սերովբէից Տէրն ու Իսրայէլի թագաւորը: Դու միայն Սուրբ ես եւ սրբոց մէջ կը հանգչիս: Քեզ կ'ազաչեմ, միա՛կ բարերար, ինձ քու մեղաւոր ու անպիտան ծառայիդ նայէ՛ եւ սրբէ՛ իմ հոգիս ու միտքըս չարին ամէն պղծութենէն: Եւ Հոգւոյդ Սրբոյ գորութեամբ կարող ըրէ՛ զիս, որ քահանայական շնորհը զգեցեալ եմ, սուրբ սեղանոյս առջեւ կենալու եւ քահանայագործելու անարատ մարմինդ եւ պատուական արիւնդ: Իմ պարանոցս քու առջեւ խոնարհեցնելով կ'ազաչեմ, քու երեսդ մի՛ դարձներ ինձմէ, եւ մի՛ տարամերժեր զիս քու ծառաներէդ: Հապա ինձմէ, քու մեղաւոր ու անարժան ծառայէդ (նուիրեալ) այս ընծաս քեզ մատուցանելու արժանի ըրէ՛: Վասն զի դուն ես՝ որ կը մատուցանես ու կը մատուցուիս եւ կ'ընդունիս ու կու տաս,

Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ փառս մատուցանեմք, հանդերձ անսկիզբն Հարբզ և ամենասուրբ և բարերար Հոգւովդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Հուացայց սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քով:

Սբէք. — Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցո՛ւք:

Ի. — Տէ՛ր, ողորմեա՛:

Սբէք. — Եւ եւս հաւատով և սրբութեամբ կացցո՛ւք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի՛ խղճիւ և գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ, մի՛ պատրանօք և խաբէութեամբ, մի՛ երկմտութեամբ և մի՛ թերահաւատութեամբ: Այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի և առաւելեալ ամենայն գործովք բարութեան՝ կացցո՛ւք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, և գացցո՛ւք զողորմութեան զշնորհս, յաւուր յայտնութեան և ՚ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, կեցուսցէ և ողորմեսցի:

Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ փառք կը մատու-  
ցանենք քու սկիզբ չունեցող Հօրդ եւ ամենասուրբ  
ու բարերար Հոգւոյդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտ-  
եանս յաւիտենից. Ամէն:

Իմ ձեռքերս կը լուամ սրբութեամբ եւ կը մօ-  
տենամ քու սեղանիդ.

Ն.—Եւ խաղաղութեան համար եւս աղաչենք  
Տիրոջ:

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛:

Ս.—Եւ հաւատով ու սրբութեամբ, ահ ու դողով  
ալ աղօթքի կենա՛նք Աստուծոյ սուրբ սեղանին առ-  
ջեւ: Ոչ թէ մեղքով ու գայթակղութեամբ, ոչ թէ նեն-  
գութեամբ, խորամանկութեամբ, ոչ թէ պատրանքով  
ու խարէութեամբ, ոչ թէ երկմտութեամբ եւ ոչ թէ  
թերահաւատութեամբ. Այլ ուղիղ վարքով, պարզ  
մտքով, միամիտ սրտով, կատարեալ հաւատքով,  
լցեալ վառ սիրով, առատօրէն նոխացած ամէն բա-  
րեգործութիւններով աղօթքի կենա՛նք Աստուծոյ  
սուրբ սեղանին առջեւ. եւ զտե՛նք ողորմութեան  
շնորհքը. մեր Տիրոջ եւ Փիկի՛ն Յիսուսի Քրիստոսի  
յայտնութեան եւ միւսանգամ գալստեան օրն. ինքն  
ապրեցնէ եւ ողորմի:

Դո. — Կեցո՛, Տէ՛ր և ողորմեա՛ :

Քհնյ. — (Ի շա՜շա-կ) — Տէր Աստուած զօրութեանց և արարիչ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ զբնաւս 'ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր : Որ և զմեր զհողեղէն բնութիւնս այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս : Դու Տէր՝ որում պատարագեմք զպատարագիսս, ընկա՛լ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս : Եւ աւարտեա՛ զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան Միածնի քոյ : Դեղ թողութեան մեղաց պարգեւեա՛ ճաշակողացս՝ զհացս զայս և զբաժակս :

Սրկէ. — Օրհնեա՛, Տէ՛ր :

Քհնյ. — Շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր՝ միանգամայն և Հոգւոյդ Սրբոյ՝ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Խաղաղութիւն \* ամենեցուն :

Դո. — Ամէն : Եւ ընդ հոգւոյդ քում :

Սրկէ. — Աստուծոյ երկրպագեսցո՛ւք :

Դո. — Առաջի քո Տէ՛ր :

Դ.—Ապրեցո՛ւր Տէ՛ր եւ ողորմէ՛:

Ք.—(Հ-Յ-Կ-Է-Ն) — Զօրութեանց Տէր Աստուածն եւ ամէն ստեղծուածներուն արարիչը, որ համօրէն արարածները ոչինչէն երեւան բերելով գոյացուցիր. Որ մեր հողեղէն բնութիւնն ալ կարգեցիր այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ սպասաւոր: Դուն Տէ՛ր, որու կը մատուցանենք այս պատարագն, ընդունէ՛ մեզմէ նուիրուած այս ընծաս: Եւ զասիկա աւարտէ՛ քու միածին Որդւոյդ մարմնոյն ու արեան խորհրդով: Ճաշակողներուս իբր մեղաց թողութեան դեղ պարգեւէ՛ հացս ու բաժակս:

Ս.—Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք.—Մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուսի Գրիստոսի շնորհօքն ու մարդասիրութեամբն, որու հետ քեզ, Հայր Աստուած եւ միանգամայն Հոգւոյդ Սրբոյ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն ✠ ամենեցուն:

Դ.—Ամէն: Եւ քու հոգւոյդ համար եւս:

Ս.—Աստուծոյ երկրպագենք:

Դ.—Տէ՛ր, քու առջեւդ:

Արհէ. — Ողջոյն տո՛ւք միմեանց 'ի համ-  
բոյր սրբութեան. և որք ոչ էք կարող  
հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ  
զրունս ելէ՛ք և աղօթեցէ՛ք:

Իպ. — Քրիստոս 'ի մէջ մեր յայտ-  
նեսցի, Որ էնն Աստուած աստ բազմեսցի:  
Խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ  
ողջունիս հրաման տուաւ, թշնամութիւնն  
հեռացաւ, սէրն ընդ հանուրս սփռեցաւ:  
Արդ պաշտօնեա՛յք, բարձեալ զձայն, տո՛ւք  
օրհնութիւն 'ի մի բերան, միասնական  
Աստուածութեանն, որում սրովքէքն են  
սրբաբան:

Արհէ. — (Ի հանդիսի Գօնի) — Որք հա-  
ւատով կայք յանդիման, Սուրբ սեղանոյս  
արքայական, Տեսէ՛ք բազմեալ զՔրիստոս  
արքայն, Եւ շուրջ պատեալ զօրք վերնական:

Իպ. — Վերհամբարձեալ զաչս ունե-  
լով, Եւ պաղատիմք զայս ասելով, Զմեղս  
մեր մի՛ յիշեսցես, Այլ գթութեամբ քո  
քաւեսցես: Ընդ հրեշտակացն օրհնեմք զքեզ,  
Եւ ընդ սրբոց, Տէ՛ր, փա՛ռք քեզ:

Արհէ. — Ահիւ կացցո՛ւք, երկիւղիւ  
կացցո՛ւք, բարւոք կացցո՛ւք, և նայեցա-  
րո՛ւք զգուշութեամբ:

Ս. — Սրբութեան համբոյրով մէկմէկու ողջոյն տուէք. եւ աստուածային խորհրդոյս հաղորդուիլ չկրցողներդ դրան առջեւ ելէ՛ք եւ աղօթեցէ՛ք:

Դ. — Քրիստոս մեր մէջ պիտի յայտնուի, էնն (ինք իրմէ եղող) Աստուածը հոս պիտի բազմի: Խաղաղութեան ծայնը հնչուեցաւ. սուրբ ողջունիս հրաման տրուեցաւ, թշնամութիւնը հեռացաւ. Սէրն ընդհանուրին տարածուեցաւ. Արդ՝ պաշտօնեանե՛ք, ծայներնիդ բարձրացնելով միաբերան օրհնութիւն տուէ՛ք համագոյ Աստուածութեան, որու կ'երգեն սերովբէները՝ Սուրբ. Սուրբ. Սուրբ:

Ս. — (Հանդիսանալով) — Դուք որ հաւատքով կը կենաք տէրունական սուրբ սեղանիս առջեւը, տեսէ՛ք թագաւորն Քրիստոս բազմած եւ վերին գօրքերը (հրեշտակները) բոլորտիքն աւաճ:

Դ. — Մեր աչքերը վեր կը յառենք ու կը պաղատինք զայս ըսելով. Մեր մեղքերը, Տէ՛ր, մի՛ յիշէ՛ր, այլ բաւէ՛ քու գթութեամբդ: Հրեշտակաց հետ կ'օրհնենք զքեզ եւ սրբոց հետալ, Տէ՛ր, փա՛նք քեզ:

Ս. — Ահիւ դողով կենանք. երկիւղով կենա՛նք. բարի կենա՛նք եւ զգուշութեամբ նայի՛նք:

Դպ. — Առ քեզ Աստուած :

Սբէի. — Պատարագ Քրիստոս մատչի  
Գառն Աստուծոյ :

Դպ. — Ողորմութիւն և խաղաղու-  
թիւն և պատարագ օրհնութեան :

Սբէի. — Օրհնեա՛, Տէ՛ր :

Քնչ. — Շնորհք, սէր և աստուածային  
սրբարար զօրութիւն Հօր և Որդւոյ \* եւ  
Հօգւոյն Սրբոյ եղիցի ընդ ձեզ \* ընդ ամենեւեան :

Դպ. — Ամէն : Եւ ընդ հօգւոյդ քում :

Սբէի. — Զգրունա, զգրունա ամենայն  
իմաստութեամբ և զգուշութեամբ : Ի վեր  
ընծայեցուցէ՛ք զմիտս ձեր աստուածային  
երկիւղիւ :

Դպ. — Ունիմք առ քեզ, Տէ՛ր ամե-  
նակալ :

Սբէի. — Եւ գոհացարո՛ւք զՏեառնէ  
բոլորով սրտիւ :

Դպ. — Արժան և իրաւ :

Քնչ. — (Ի շաճո-ի) — Արժան է ստու-  
գապէս և իրաւ ամենայնորդոր փութով



Դ.— Դէպ 'ի քեզ, Աստուած:

Ս.— Քրիստոս, Գառն Աստուծոյ, կը մատուցուի իբր պատարագ:

Դ.— Իբր ողորմութիւն ու խաղաղութիւն եւ օրհնութեան պատարագ:

Ս.— Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք.— Հօր եւ Որդ ✠ ևոյ եւ Հոգւոյն Սրբոյ աստուածային սրբարար զօրութիւնը, սէրը, շնորհքն ըլլայ ձեզ ✠ ամենուր:

Դ.— Ամէն: Եւ քու հոգւոյդ համար եւս:

Ս.— Դռները, ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ դռները թող հսկուին: Ձեր մտքերը դէպ 'ի վեր բարձրացուցէք աստուածային երկիւղով:

Դ.— Դէպ 'ի քեզ բարձրացուցած ենք, ամենակալ Տէ՛ր:

Ս.— Եւ Տիրօջմէ գոհացէ՛ք բոլոր սրտով:

Դ.— Արժանի եւ իրաւ է:

Ք.— (Յ-Յ-Յ-Յ-Յ) — Ստուգապէս արժանի է եւ իրաւ՝ սրտագին եռանդով միշտ երկրպագութեամբ փառա-

միշտ երկիր պագանելով փառաւորել զքեզ ,  
 Հա՛յր ամենակալ : Որ քոյին անգննելի և  
 արարչակից Բանիւղ՝ զանիծիցն բարձեր  
 զկրճիմն : Որ ժողովուրդ ինքեան առեալ  
 զեկեղեցի՝ սեպհականեաց զհաւատացեալս  
 ՚ի քեզ : Եւ զննելի բնութեամբ ըստ ՚ի  
 Կուսէն տնտեսութեան հաճեցաւ բնակիլ ՚ի  
 մեզ : Եւ նորագործ աստուածապէս ճարտա-  
 րապետեալ զերկիրս երկին արար : Վասնզի  
 որում ոչն հանդուրժէին առաջի կալ զու-  
 արթնոցն ջոկք՝ զարհուրեալք ՚ի փայլակ-  
 նացայտ և յանմատոյց լուսոյ Աստուածու-  
 թեանց , եղեալ այդպիսից մարդ յաղագս  
 մերոյ փրկութեան , չնորհեաց մեզ ընդ  
 երկնայինսն պարել զհոգեղէն պարս :

Սբէք . — Օրհնեա՛ Տէ՛ր :

Քնչ . — Եւ ընդ սերովբէսն և ընդ  
 քերովբէսն միաձայն սրբասացութեամբ  
 յօրինել նուագս , և համարձակապէս գոչե-  
 լով՝ աղաղակել ընդ նոսին և ասել :

Դպ . — Սո՛ւրբ , Սո՛ւրբ , Սո՛ւրբ , Տէ՛ր  
 զօրութեանց , լի են երկինք և երկիր փա-

ւորել զքեզ, Հա՛յր ամենախալ, որ անիծից արգելքը վերցուցիր քու անքննելի ու արարչակից Որդւոյդ Բանին Աստուծոյ միջոցաւ: Որն որ եկեղեցին իրեն ժողովուրդ ընտրելով՝ քեզ հաւատացողները՝ սեպհականութիւն քրաւ: Եւ Սուրբ Կուսէն առած մարդեղութեանը համեմատ ունեցած զննելի քնութեամբը հանեցաւ մեր մէջ բնակիլ: Եւ աստուածօրէն ճարտարապետութեամբ նորոգելով երկիրն ըրաւ երկինք: Վասնզի որուն առջեւը կենալու չէին հանդուրժեր հրեշտակաց խումբերը՝ սարսափելով Աստուածութեանդ փայլակնացոյտ եւ անմատչելի լուսէն, այդպիսիոց մեր փրկութեան համար մարդ ըլլալով, մեզ շնորհեց երկնային հրեշտակաց հետ խայտալ ուրախանալ:

Ս.—Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք.—Եւ սերովբէներուն ու քերովբէներուն հետ սրբասացութեամբ երգեր յօրինել եւ համարձակապէս գոչելով՝ անոնց հետ աղաղակել ու ըսել:

Դ.—Սո՛ւրբ. Սո՛ւրբ. Սո՛ւրբ. Տէր զօրութեանց.

ոօք քո, օրհնութիւն 'ի բարձունս: Օրհնեալ  
որ եկիր և գալոցդ ես անուամբ Տեառն.  
Ովսաննա' 'ի բարձունս:

Արկէ. — (Ի հանդիսի առաջ) — Եւ  
զստոյգ փրկութեան՝ որ միշտ ընդ ամենայն  
տեղիս գոհութիւն մատուցանեմք քեզ,  
Քրիստոս: Որով և զհրաշալի զյարութիւնդ  
քո գովեն զօրութիւնք: Սարսին սերովբէք,  
զողան քերովբէքն, և իշխանութիւնք  
վերին պետութեանցն պար առեալ ձայնիւ  
եղանակեն և ասեն:

Քհնչ. — (Ի շաճակ) — Սո՛ւրբ \* Սո՛ւրբ  
\* Սո՛ւրբ \* ես ճշմարտապէս և ամենասուրբ.  
և ո՞վ ոք պանծասցի բովանդակել բանիւ  
զքո 'ի մեզ զանբաւ բարեգործութեանդ  
զեզմունս: Որ և անդէն իսկ 'ի նախնումն  
զանկեալն ընդ մեզօք՝ զանազան եղանակօք  
խնամեալ սիրովեցեր՝ մարգարէիւք, օրինացն  
տուչութեամբ, քահանայութեամբ և ստուե-  
րակերպ երնջոցն մատուցմամբ: Իսկ 'ի  
վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ  
զպարտեաց մերոց խզեալ զգատակնիք, ե-  
տուր մեզ զՈրդիդ քո միածին՝ պարտապան

երկինքն ու երկիրը լեցուն են քու փառքովդ. օրհնութիւն 'ի բարձունս: Օրհնեալ ես, որ եկար ու պիտի գաս Տիրոջ անուամբ: Ովսաննա՛ 'ի բարձունս:

Ս.— (Հանդիսաւոր օրեր). — Եւ ամէն տեղ միշտ փրկութեան ստոյգ զօհութիւնը կը մատուցանենք քեզ, Քրիստո՛ս: Որով եւ քու հրաշալի յարութիւնդ կը զովեն երկնային զօրութիւններն (հրեշտակներն), կը սարսին սերովբէներն, կը դողան քերովբէներն եւ վերին պետութեանց իշխանութիւններն պարի ուրախութեան ծայնով կ'եղանակեն ու կ'ըսեն:

Ք.— (Հանդիսաւոր օրեր) — Սո՛ւրբ ✠ Սո՛ւրբ ✠ Սո՛ւրբ ✠ ես նշմարտապէս ու ամենասուրբ. եւ ո՞վ պիտի պարծենայ խօսքով համառօտել քու անբաւ բարեսրտութեանդ մեզ շնորհած առատ առատ պարգեւները: Որ բոլորովին սկիզբէն իսկ մեղքի տակ ինկածը (մարդս) զանազան եղանակներով խնամելով սփոփեցիր՝ խնայարկներով, լօրէնք տալով, քահանայութեամբ ու երինջներու ստուերակերպ պատարագով: Բայց վերջը վերջը, այս օրերու կատարածին ջնջելով մեր համօրէն մեղքերուն իսկ դատակնիքը՝ մեզ պարգեւեցիր քու Միածին Որդիդ իբր պարտա-

և պարտա, զենուճն և օժեալ, զառն և երկնաւոր հաց, քահանայապետ և պատարագ: Վասն զի ինքնդ է բաշխող, և նոյն ինքն բաշխի 'ի միջի մերում միշտ անձախապէս: Վասն զի եղեալ հաւաստեալ և առանց ցնորից մարդ, և անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յԱստուածածին և 'ի Սուրբ Կուսէն Մարեմայ, ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցազոյս առանց մեղաց, և յաշխարհակեցոյց և յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ 'ի խաչն:

Առեալ զհացն՝ 'ի սուրբ, յաստուածային, յանարատ և 'ի պատուական ձեռս իւր, օրհ \* նեաց, գոհացաւ, երեկ, ետ իւրոց՝ ընտրեալ, սուրբ և բազմեալ աշակերտացն՝ ասելով.

Սրկէ. — Օրհնեա Տէր:

Քհնչ. — Ի յայն.

պան ու պարտք. իրր պատարագեալ ու օծեալ, իրր գառն ու երկնաւոր հաց, իրր պատարագիչ քահանայապետ ու պատարագ: Վասն զի ինքդ իսկ բաշխող է եւ ինքն իսկ մեր մէջ կը բաշխուի միշտ առանց սպառելու: Որովհետեւ ոչ թէ երեւութապէս, հապա ստուգապէս մարդ եղած ըլլալով եւ անշփոթ միաւորութեամբ Աստուածածին Սուրբ Կոյս Մարիամէն մարմնանարով, մարդկային կենաց ամէն կիրքերէն առանց մեղքի նանապարհորդեց եւ կամաւորապէս աշխարհքն ապրեցնող եւ մեր փրկութեան առիթն եղող խաչին հասնելով.

Հացն առնելով իր սուրբ, աստուածային, անարատ ու պատուական ձեռքն, օրհ ✱ նեց, զոհացաւ, կտրեց, տուաւ իր՝ ընտրեալ, սուրբ եւ բազմող աշակերտացն՝ ըսելով.

Ս.— Օրհնէ՛՛ Տէ՛ր:

Ք.— (Բարձրէն):

Առէ՛ք կերէ՛ք  
այս է մարմինս իմ,  
որ վասն ձեր և բազմաց  
բաշխի 'ի քառութիւն  
և 'ի թողութիւն մեղաց:

Դպ. — Ամէն:

Սբկէ. — Օրհնեա՛ Տէ՛ր:

Քննչ. — (Ի շ-շ-ւ) — Նոյնպէս և  
զբաժակն առեալ, օրհնեաց, զորհացաւ,  
էարբ, ետ իւրոց ընտրեալ, սուրբ և բազ-  
մեալ աշակերտացն՝ ասելով: (Ի յայն)

Արբէ՛ք 'ի սմանէ  
ամենեմեան այս էարիւնս իմ  
նորոյ ուխտի  
որ յաղագս ձեր և բազմաց  
հեղանի 'ի քառութիւն  
և 'ի թողութիւն մեղաց:





ԱՆՈՒՆ

ՊԱՏԵՐԱԳ

17 1993

19 1993

ՄԱՐԿՆԵՐ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ

ՅԻՍՏ



Ի ԿՆՍՏԱՆՍՆՈՒԼՆԻ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ

ՉԻՆՆԵՐ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ

ՏԵՍՏԱՄԵՆ  
ՏԵՍՏԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ  
ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ

Առէ՛ք կերէ՛ք  
այս է իմ մարմինս,  
որ ձեզ և շատերուն համար  
կը բաշխուի քաւութեան  
և մեղաց թողութեան համար:

Դ.— Ամէն:

Ս.— Օրհնէ՛՛ Տէ՛ր:

Ք.— (Հաճուի՛նք) — Նոյնպէս եւ բաժակն առնելով՝  
օրհնեց, զոհացաւ, խմեց, տուաւ իր ընտրեալ,  
սուրբ եւ բազմող աշակերտացն՝ ըսելով. (Բարչեհ)

Ասկէ խմեցէ՛ք ամէնիկ  
այս է նոր ուխտի  
իմ արիւնս,

որ ձեզ և շատերուն համար  
կը թափուի քաւութեան  
ու մեղաց թողութեան համար:

Դպ. — Ամէն : Հա՛յր երկնաւոր , որ զՈր-  
դիդ քո ետուր 'ի մահ վասն մեր՝ պարտա-  
պան պարտեաց մերոց : Հեղմամբ արեան  
նորա՝ աղաչեմք զքեզ , ողորմեա՛ քո բանա-  
ւոր հօտիս :

Քնչ. — (Ի ճաճս-կ) — Եւ զսոյն միշտ իւր  
յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ  
բարերար Որդիդ քո միածին : Եւ իջեալ 'ի  
ստորին վայրս մահու մարմնովն՝ զոր 'ի մեր-  
մէս ընկալաւ յազգակցութենէ : Եւ զնիգս  
դժոխոցն աղարտեալ հզօրեղապէս , զքեզ  
միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած , զԱս-  
տուածդ կենդանեաց և մեռելոց :

Եւ արդ՝ մեք , Տէր , ըստ այսմ հրամա-  
նատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ  
փրկական մարմնոյ և արեան Միածնի քոյ ,  
յիշեմք զղորա որ վասն մեր զփրկագործ  
չարչարանն , զկենդանատու խաչելութիւնն ,  
զերեքօրեայ զթաղումն , զերանելի յարու-  
թիւնն , զաստուածապէս համբարձումն ,  
զնստելն ընդ աջմէ քո , Հա՛յր , զահաւոր և  
զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոս-  
տովանիմք և օրհնեմք :

Սրկէ. — Օրհնեա՛ , Տէ՛ր :

Քնչ. — Եւ զքոյս 'ի քոյոցս քեզ մատուցա-

Դ.—Ամէն, Հա՛յր երկնաւոր, որ քու Որդիդ մահուան յանձնեցիր մեզ համար մեր մեղաց իբր պարտապան: Անոր թափուած արիւնովը քեզ կ'աղաչենք, ողորմէ՛ քու բանաւոր հօտիդ (մեզ):

Բ.—(Հ-Հ-Ի-Ի)—Եւ զասիկա միշտ իբր իր յիշատակն ընելու պատուիրանն աւանդեց մեզ քու Միածին բաւերար Որդիդ: Եւ մեր ազգակցութենէն ընդունած մահկանացու մարմնովը այս աշխարհիս վրայ իջնելով, եւ դժոխքի փականքները զօրաւորապէս խորտակելով՝ զքեզ կենդանեաց ու մեռելոց Աստուածը, զքեզ ճանչցուց մեզ իբր միակ ճշմարիտ Աստուած:

Եւ արդ՝ մենք, Տէ՛ր, իր այս տուած հրամանին համաձայն քու միածին Որդւոյդ մարմնոյն ու արեան այս փրկական խորհուրդը մատուցանելով կը յիշենք մեզ համար ատոր փրկագործ չարչարանքը, կենսատու խաչելութիւնն, աստուածօրէն համբարձումը, քու աջ կողմդ, Հա՛յր, նստիլը, ահաւոր ու փառաւորեալ միւսանգամ գալուստը կը խոստովանինք ու կ'օրհնենք:

Ս.—Օրհնէ՛, Տէ՛ր:

Բ.—Եւ քուկիններէդ քուկինդ քեզ կը մատուցա-

ցանեմք, ըստ ամենայնի և յազագս ամենեցուն :

Իւ.—Յամենայնի օրհնեալ ես, Տէ՛ր, օրհնեմք զքեզ, զովեմք զքեզ, զոհանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէ՛ր Աստուած մեր :

Քհնյ.—(Ի շաշուի) — Զքեզ արգարեւ, Տէր Աստուած մեր, զովեմք և զքէն զոհանամք հանապազ : Որ զանց արարեր զմերով անարժանութեամբս, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս : Ոչ յազագս մերոյ ինչ բարեգործութեան՝ յորոց յոյժ թափուր եմք և միշտ ունայն գտանիմք հանապազ, այլ ՚ի քո բազմագեղ ներողութիւնդ ցանկ ապաւինեալ՝ համարձակիմք մերձենալ ՚ի սպասաւորութիւն մարմնոյ և արեան Միածնի քոյ Տեառնդ մերոյ և Փրկչիդ Յիսուսի Քրիստոսի : Որում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Սբկէ.— Օրհեա՛, Տէ՛ր :

Քհնյ.— Սաղազութիւն \* ամենեցուն :

Իւ.— Եւ ընդ հոգւոյդ քում :

Սբկէ.— Աստուծոյ երկրպագեսցո՛ւք :

նենք, ամէն բանի նկատմամբ եւ ամենուն համար:

Դ.— Ամէն բանի մէջ օրհնեալ ես, Տէ՛ր, կ'օրհնենք զքեզ, կը գովենք զքեզ կը գոհանանք քեզմէ, կ'աղաչենք քեզ, մեր Տէ՛ր Աստուածը:

Բ.— (Մատթ. 26:13).— Արդարեւ մեր Տէր Աստուածը, զքեզ կը գովենք ու քեզմէ կը գոհանանք միշտ: Որ մեր անարժանաւորութեան ճնայելով՝ այսպիսի ահաւոր ու անպատում խորհրդոյ սպասաւոր կարգեցիր: Ոչ թէ մեր ո եւ է բարեգործութեան համար, որոնցմէ շատ պարապ ենք ու ձեռնունայն կը գտնուինք միշտ, հապա քու բազմառատ ներողութեանդ ամէն ժամանակ ապաւինած՝ կը համարձակինք քու Միածին Որդւոյդ, մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի մարմնոյն ու արեան սպասաւորութեան մօտենալ: Որու կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ս.— Օրհնէ՛ Տէ՛ր:

Բ.— Խաղաղութիւն ✽ ամենեցուն:

Դ.— Եւ քու հոգւոյդ համար եւս:

Ս.— Աստուծոյ երկրպագե՛նք:

Դպ. — Առաջի քս Տէ՛ր: Որդի Աստուծոյ,  
որ պատարագեալ Հօր 'ի հաշտութիւն, հաց  
կենաց բաշխիս 'ի մեզ. հեղմամբ արեան քո  
սուրբ աղաչեմք զքեզ, ողորմեա՛ արեամբ  
քո փրկեալ հօտի:

Քննչ. — (Ի շաճակ) — Երկիր պաղանեմք և  
աղաչեմք և խնդրեմք 'ի քէն, բարերար  
Աստուած, առաքեա՛ 'ի մեզ և յառաջի եղ-  
եալ յընծայս յայս՝ զմշտնջենաւորակից քո  
և զէակից Սուրբ Հոգիդ:

Որով զհաց օրն ✠ նեալ՝ մարմին ճշմար-  
տապէս արարեր Տեառն մերոյ և Փրկչին Յի-  
սուսի Քրիստոսի:

Որով զհաց օրն ✠ նեալ՝ մարմին ճշմար-  
տապէս արարեր Տեառն մերոյ և Փրկչին Յի-  
սուսի Քրիստոսի:

Որով զհաց օրն ✠ նեալ՝ մարմին ճշմար-  
տապէս արարեր Տեառն մերոյ և Փրկչին Յի-  
սուսի Քրիստոսի:

Եւ զբաժակ օրն ✠ նեալ՝ արիւն ստուգա-  
պէս արարեր Տեառն մերոյ և Փրկչին Յիսու-  
սի Քրիստոսի:

Եւ զբաժակ օրն ✠ նեալ՝ արիւն ստուգա-  
պէս արարեր Տեառն մերոյ և Փրկչին Յի-  
սուսի Քրիստոսի:

Եւ զբաժակ օրն ✠ նեալ՝ արիւն ստուգա-



Դ. — Տէ՛ր քու առջեւդ, Որդի Աստուծոյ, որ Հօրդ հետ հաշտութեան համար պատարագուելով՝ կենաց հաց կը բաշխուիս մեր մէջ. քու սուրբ արեանդ հեղմամբ կ'աղաչենք քեզ. ողորմէ՛ քու արեամբդ փըրկուած հօտին (մեզ):

Բ. — (Մ. Զ. Կ. Է.) — Կ'երկրպագենք եւ կ'աղաչենք եւ կը խնդրենք քեզմէ, բարերար Աստուած հոս ներկայացուած այս ընծայիս եւ մեր վրայ զրկէ՛ քու մըշտընջենաւորակից ու էակից Սուրբ Հոգիդ:

Որով հացն օրհ ք նելով՝ ճշմարտապէս ըրիր մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի մարմինն:

Որով հացն օրհ ք նելով՝ ճշմարտապէս ըրիր մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի մարմինն:

Որով հացն օրհ ք նելով՝ ստուգապէս ըրիր մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի մարմինն:

Եւ բաժակն օրհ ք նելով՝ ստուգապէս ըրիր մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի արիւնն:

Եւ բաժակն օրհ ք նելով՝ ստուգապէս ըրիր մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի արիւնն:

Եւ բաժակն օրհ ք նելով՝ ստուգապէս ըրիր մեր

պէս արարեր Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի :

Որով զհաց և զգինի օրհ ✠ նեալ՝ մարմին և արիւն ճշմարտապէս արարեր Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի :

Որով զհաց և զգինի օրհ ✠ նեալ՝ մարմին և արիւն ճշմարտապէս արարեր Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի :

Որով զհաց և զգինի օրհ ✠ նեալ՝ մարմին և արիւն ճշմարտապէս արարեր Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի , փոխարկելով Հոգւովդ քով Սրբով :

Սբի՛ք . — Օրհնեա՛ , Տէ՛ր :

Քնչ . — Որպէս զի եզիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս՝ յանդատապարտութիւն , 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեզաց :

Բոյ . — Հոգի՛ Աստուծոյ , որ զփառակցի քո խորհուրդ իջեալ 'ի յերկնից կատարես 'ի ձեռս մեր . հեղմամբ արեան սորա , ազաչեմք զքեզ , հանգս՛ զհոգիս մեր ննջեցելոցն :

Քնչ . — (Ի Ժ-Ժ-Կ) — Սովաւ շնորհեա՛ զսէր , զհաստատութիւն և զըրզայի զխաղաղութիւն ամենայն աշխարհի , սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց , քահանայից , սարկաւազաց , թագաւորաց աշխարհի , իշխանաց , ժողովրդոց , ճանա-

Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի արիւնն:

Որով հացն ու գինին օրհ ք ներով՝ ճշմարտապէս բրիւր մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի մարմինն ու արիւնն:

Որով հացն ու գինին օրհ ք ներով՝ ճշմարտապէս բրիւր մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի մարմինն ու արիւնն:

Որով հացն ու գինին օրհ ք ներով՝ ճշմարտապէս բրիւր մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի մարմինն ու արիւնն, փոխարկելով քու Սուրբ Հոգւովդ:

Ս. — Օրհնէ՛՛ Տէ՛ր:

Ք. — Որպէս զի ասիկա մեր ամենուն, զայն բնորոնողներուս ըլլայ անդատապարտութիւն, քաւութիւն եւ մեղաց թողութիւն:

Դ. — Հոգի՛ Աստուծոյ, որ երկինքէն իջնելով քու փառակցիդ խորհուրդը կը կատարես մեր ձեռքով: Ասոր թափած արիւնովը կաղաչենք քեզ, մեր ննջեցելոց հոգիներուն պարգեւէ՛՛ հանգիստ:

Բ. — (Ձ-Ձ-Կէն) — Այս պատարագով շնորհէ՛՛ սէր, հաստատութիւն ու փափաքելի խաղաղութիւն ամբողջ աշխարհի, սուրբ եկեղեցւոյ ու ամէն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, աշխարհի թագաւորաց, իշխանաց, ժողովրդոց, նամբորդներուն,

պարհորդելոց , նաւելոց , կապելոց , վտանգելոց , աշխատելոց և որք 'ի պատերազմունս բարրարոսաց :

Սովաւ և օգոց շնորհեա՛ զբարեխառնութիւն , և անոց զպողաբերութիւն , և ախտացելոց 'ի պէսպէս ցաւս՝ փութապէս զառողջութիւն :

Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն 'ի Քրիստոս զննջեցեալսն՝ զեպիսկոպոսունս , զերիցունս , զսարկաւազունս և զբնաւուխտ եկեղեցւոյ քում սրբոյ , և զամենեսեան որք յաշխարհական կարգէ՛ զարս և զկանայս հաւատով վախճանեալս :

Սբէք. — Օրհնեա՛ Տէր :

Քհնչ. — Ընդ որս և մեզ այց արասցես՝ բարերար Աստուած , ազաչեմք :

Դռ. — Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛ :

Քհնչ. — Աստուածածին սրբոյ Կուսին Մարիամու և Յովհաննու Մկրտչին , Ստեփանոսի նախավկային , և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին , և ամենայն սրբոց , եղիցի յիշատակ 'ի սուրբ պատարագս , ազաչեմք :

նաւողներուն, կալանաւորներուն, վտանգի ենթարկողներուն, տաժանակիր աշխատեանց դատապարտեալներուն եւ բարբարոսաց դէմ պատերազմողներուն:

Ասով շնորհէ՛ օղոց բարեխառնութիւն, արտերուն պտղաբերութիւն, եւ տեսակ տեսակ հիւանդութիւն ունեցողներուն արագ առողջութիւն:

Ասով հանգիստ պարգեւէ՛ ար 'ի Քրիստոս ննջող ամէն հաւատացելոց՝ եւխտապասաց, քահանայից, սարկաւազաց եւ քու սուրբ եկեղեցւոյդ համօրէն ուխտին, եւ աշխարհականաց դասէն հաւատքով մեռնող արանց ու կանանց, ամենուն:

Ս. — Օրհնէ՛ Տէ՛ր:

Ք. — Ասոնց ամենուն հետ մեզ ալ այցելէ՛, բարերար Աստուած, կ'աղաչենք:

Դ. — Յիշէ՛ Տէ՛ր եւ ողորմէ՛:

Ք. Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնայ եւ Յովհաննէս Մկրտչին, Սահփանոս նախավկային եւ մեր Հօր սուրբ Գրիգոր Լուսաւորչին եւ ամէն սրբոց յիշատակը թող ըլլայ այս սուրբ պատարագիս մէջ. կ'աղաչենք:

Աբիֆ. — Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, և ամենայն հայրապետաց սրբոց, առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւազաց, և ամենայն սրբոց, եղեցի յիշատակ 'ի սուրբ պատարագս. աղաչեմք :

Գղ. — Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛ :

Աբիֆ. — (Յբ. Կեր-Կէ) — Օրհնեալ, գովեալ և փառաւորեալ, հրաշալի և աստուածազարդ յարութեանն Քրիստոսի երկիր պազանեմք :

Գղ. — Փա՛ռք յարութեան քո Տէ՛ր :

Աբիֆ. — (Ի «ձնի սրբոց») — Սուրբ և աստուածահաճոյ մարգարէին, Կ-ճ հայրապետին, Կ-ճ առաքելոյն, Կ-ճ մարտիրոսին («յս աճս-ն»), որոյ այսօր զյիշատակն կատարեցաք, եղիցի յիշատակ 'ի սուրբ պատարագս, աղաչեմք :

Գղ. — Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛ :

Աբիֆ. — Առաջնորդացն մերոց և առաջին լուսաւորչացն սրբոց, Թադէոսի և Բարթողիմէոսի առաքելոցն, և Գրիգորի Լուսաւորչին, Արիստակէսի, Վրդանէսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսէսի, Սահակայ, Գանիէլի և Խաթայ, Մեսրոպայ վարդապետին, և Գրիգորի Նարեկացւոյն, և Ներսէսի Կլայեցւոյն, և ամենայն սրբոց հովուաց և հով-

Ս.—Սուրբ առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց եւ ամէն սուրբ հայրապետաց, առաքելագործ եպիսկոպոսաց, քահանայից, ուղղփառ սարկաւազաց եւ ամէն սրբոց յիշատակը թող ըլլայ այս սուրբ պատարագիս մէջ. կ'աղայենք :

Դ.—Յիշէ՛՛ Տէ՛ր, եւ ողորմէ՛ :

Ս.— (Յբ. Կերւի) Յիսուսի Քրիստոսի օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ հրաշալի եւ աստուածազարդ յարութեանը կ'երկրպագենք :

Դ.—Տէ՛ր, փա՛նք քու յարութեանդ :

Ս.— (Սբբոց ասէն) (Սյա անան) սուրբ եւ աստուածահաճոյ մարգարէին, իմ հայրապետին, իմ առաքեալին. իմ մարտիրոսին, որու յիշատակն այսօր կատարեցինք, անոր յիշատակը թող ըլլայ այս պատարագիս մէջ, կ'աղայենք :

Դ.—Յիշէ՛՛ Տէ՛ր եւ ողորմէ՛ :

Ս. Մեր առաջնորդներուն եւ առաջին սուրբ լուսաւորիչներուն Թադէոս ու Բարթողիմէոս առաքելոց եւ Գրիգոր Լուսաւորչին, Արիստակէսի, Վրդանէսի, Յուսիկի, Գրիգորիոսի, Ներսէսի, Սահակայ. Դանիէլի, Խաթայ, Մեսրոպ Վարդապետի, եւ Գրիգոր Նարեկացւոյն եւ Ներսէսի Կրայեցւոյն եւ Հայաստանի ամէն սուրբ հոգեւոր հովիւներու եւ հովուապետներու :

ուապետացն Հայաստանեայց, եղիցի յիշ-  
տակ 'ի սուրբ պատարագս. աղաչեմք:

Դո. — Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛:

Սրկէ. — Միանձնացելոց սրբոց, առաքինա-  
սէր և աստուածուսոյց կրօնաւորացն Պօղոսի,  
Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ռնուիրիոսի,  
աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Ար-  
սենի, Եւագրի, Յովհաննիսեանց, և Սիմէ-  
ոնեանց սրբոց Ոսկեանց, և Սուքիասեանց,  
և ամենայն սրբոց հարց, և աշակերտելոց  
նոցին ընդ տիեզերս եղիցի յիշատակ 'ի սուրբ  
պատարագս. աղաչեմք:

Դո. — Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛:

Սրկէ. — Թագաւորաց հաւատացելոց սրբոց,  
Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ, և  
Թէոդոսի, և ամենայն սուրբ և բարեպաշտ  
Թագաւորաց և աստուածասէր իշխանաց,  
եղիցի յիշատակ 'ի սուրբ պատարագս. աղա-  
չեմք:

Դո. — Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛:

Սրկէ. — Ընդհանուր ամենայն հաւատացե-  
լոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց,  
և ամենայն չափու հասակի հաւատով և սրբ-  
բու թեամբ 'ի Քրիստոս ննջեցելոց, եղիցի  
յիշատակ 'ի սուրբ պատարագս. աղաչեմք:



րու յիշատակը թող ըլլայ այս պատարագիս մէջ. կ'աղաչենք:

Դ.—Յիշէ՛ Տէ՛ր եւ ողորմէ՛:

Ս.—Սուրբ ճգնաւորներու, առաքինասէր ու աստուածուտոյց կրօնաւորաց Պօղոս, Մակարի, Ռնոփրիոսի, արքայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Եւագրի, Յովհաննէսեանց եւ Սիմէոնեանց, սուրբ Ոսկեանց եւ Սուրբիասեանց եւ ընդհանուր աշխարհի ամէն սուրբ հայրերուն եւ անոնց աշակերտողներուն յիշատակը թող ըլլայ սուրբ պատարագիս մէջ. կ'աղաչենք:

Դ.—Յիշէ՛ Տէ՛ր եւ ողորմէ՛:

Ս.—Հաւատացեալ սուրբ թագաւորաց, Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ եւ Թէոդոսի եւ ամէն սուրբ եւ բարեպաշտ թագաւորաց ու աստուածասէր իշխանաց յիշատակը թող ըլլայ սուրբ պատարագիս մէջ. կ'աղաչենք:

Դ.—Յիշէ՛ Տէ՛ր եւ ողորմէ՛:

Ս.—Հաւատով եւ սրբութեամբ 'ի Քրիստոս նընջող ընդհանուր ամէն հաւատացելոց, արանց ու կանանց, ծերոց ու տղայոց եւ ամէն չափաւաս անձանց յիշատակը թող ըլլայ այս սուրբ պատարագիս մէջ. կ'աղաչենք:

Ի. — Յիշեա՛ Տէ՛ր եւ ողորմեա՛ :

Քննչ. — (Ի շ-շ-ի) — Յիշեա՛ Տէ՛ր եւ ողորմեա՛ , և օրհնեա՛ զսուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցի քս , զոր փրկեցեր պատուական արեամբ Միածնի քոյ , և ազատեցեր խաչիւն սրբով , շնորհեա՛ սմա զանշարժ զխաղաղութիւն :

Յիշեա՛ , Տէ՛ր եւ ողորմեա՛ , և օրհնեա՛ զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս , որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն 'ի մեզ զբանն ճշմարտութեան :

Արհէ. — Օրհնեա՛ , Տէ՛ր :

Քննչ. — (Ի յ-յն) — Եւս առաւել զՍրբագան Պապն մեր զՏէր (Ա. Ա.) և զերջանիկ Պատրիարքն մեր զՏէ՛ր (Ա. Ա.) և զերջանիկ նախագահ եպիսկոպոսապետն մեր զՏէր (Ա. Ա.) և զերջանիկ Արքեպիսկոպոսն մեր զՏէր (Ա. Ա.) և զերջանիկ եպիսկոպոսն մեր զՏէր (Ա. Ա.) շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ :

Արհէ. — Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր՝ վասն սուրբ և անմահ պատարագիս որ 'ի վերայ սրբոյ սեղանոյս : Զի զսա մեզ 'ի սրբութեան

Դ.—Յիշէ՛՛ Տէ՛ր եւ ողորմէ՛:

Ք.—(Հ-Ն-Ի-Է-Ն)—Յիշէ՛՛ Տէ՛ր եւ ողորմէ՛. ու օրհնէ՛ քու սուրբ կաթողիկէ ու առաքելական եկեղեցիդ, զոր փրկեցիր քու Միածին Որդւոյդ պատուական արիւնովն եւ փրկեցիր անոր սուրբ խաչովը. այս եկեղեցւոյդ շնորհէ՛ անշարժ խաղաղութիւնս:

Յիշէ՛՛ Տէ՛ր եւ ողորմէ՛, եւ օրհնէ՛ ճշմարտութիւնը շիտակ վարդապետութեամբ մեզ հասկցնող ամէն ուղղափառ եպիսկոպոսները:

Ս.—Օրհնէ՛ Տէ՛ր:

Ք.—(Բ-Ր-Յ-Է-Ն)—Եւս առաւել մեր Սրբազան Պապը Տէր (Ա. Ա.) եւ մեր երջանիկ Պատրիարքը Տէր (Ա. Ա.) եւ մեր երջանիկ նախագահ եպիսկոպոսապետը Տէր (Ա. Ա.) Իմ մեր երջանիկ Արքեպիսկոպոսը Տէր (Ա. Ա.) Իմ մեր երջանիկ եպիսկոպոսը Տէր (Ա. Ա.) երկայն ատեն մեզ շնորհէ՛ ուղիղ վարդապետութեամբ:

Ս.—Գոհութիւն ու փառաբանութիւն կը մատուցանենք քեզ Տէ՛ր Աստուած մեր. այս սուրբ սեղանիս վրայի սուրբ ու անմահ պատարագիս համար: Որպէս զի ասիկա կենաց սրբութեան համար մեզ պարգեւես:

կենդանութեան պարզեցեցես: Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն և զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ, և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց: Եւս առաւել սրբազան Պապին մերոյ Տեառն (այս ա՛ն՝ն): Եւ պատուական Պատրիարքին մերոյ Կաթողիկոսին մերոյ Կաթողիկոսին մերոյ Տեառն (այս ա՛ն՝ն): Եւ քահանայիս որ զպատարագս մատուցանէ: Եւ վասն զօրութեան և յաղթութեան թագաւորաց քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից: Աղաչեսցո՛ւք և վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ բաբունապետացն մերոց, և շինողաց սուրբ եկեղեցւոյս, և որք ընդ հովանեատորին են հանգուցեալ: Ազատութիւն եղբարց մերոց գերելոց, և շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանգիստ հաւատով և սրբութեամբ ՚ի Քրիստոս կատարելոցն: Եղիցի յիշատակ ՚ի սուրբ պատարագս. աղաչեմք:

Իդ. — Ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն:

Քհնյ. — (Ի թա՛մն) — Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛, եւ օրհնեա՛ զքո առաջի կացեալ ժո-

խաղաղութիւնն ամէն աշխարհի, սուրբ եկեղեցւոյ եւ ամէն ուղղափառ եպիսկոպոսաց: Եւս առաւել մեր Սրբազան Պապին Տեառն (Ա. Ա.), եւ մեր պատուական Պատրիարքին Կաթողիկոսին Եւս Եպիսկոպոսին Տեառն (Կաթողիկոսին): Եւ քահանայիս, որ այս պատարագը կը մատուցանէ: Եւ քրիստոնեայ թագաւորաց ու բարեպաշտ իշխանաց զօրութեանն ու յաղթութեանը համար: Կ'աղաչենք եւ կը խնդրենք հանգուցեալ բարունապետաց եւ այս սուրբ եկեղեցիս շինողաց եւ ասոր հովանիին տակ հանգուցեալ հոգւոց համար: Ազատութիւն՝ զերի գացող մեր եղբարց, շնորհ՝ հոս ներկայ այս ժողովրդեանս, հանգիստ՝ հաւատով սրբութեամբ 'ի Քրիստոս ննջողներուն: Ասոնց յիշատակը թող ըլլայ այս պատարագիս մէջ. կ'աղաչենք:

Դ.—Ամէն բանի նկատմամբ եւ ամենուն համար:

Բ.—(Կաթողիկոսին)—Յիշէ՛ Տէ՛ր եւ ողորմէ եւ օրհնէ՛ հոս քու առջեւդ կեցող այս ժողովուրդը ու այս

ղովուրդս, և զպատարագիս մատուցողս,  
եւ պարգեւեա սոցա զպիտոյսն եւ զօգ-  
տակարսն:

Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛, և օրհնեա՛  
զուխտաւորս և զպտղաբերիչս եկեղեցւոյ  
քոյ սրբոյ, և որք յիշեն զաղքատս ողորմա-  
ծութեամբ. և հատո՛ նոցա զպարտս նոցա  
ըստ ընդաբոյս առատութեան քո՝ հարիւ-  
րապատիկ աստ և ՚ի հանդերձելումդ:

Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛, և գթա՛ ՚ի  
հոգիս հանգուցելոցն. հանգո՛ զնոսին, և  
լուսաւորեա՛ և դասաւորեա՛ ընդ սուրբս քո  
յարքայութեանդ երկնից, և արժանի արա՛  
ողորմութեան քում:

Յիշեա՛, Տէ՛ր և զհոգի ծառայի կամ ա-  
ղախնոյ քոյ (Ս. Ս.) (ԵՒԷ ՆՆՂԵԿԵԱԼ) և ողոր-  
մեա՛ նմա ըստ մեծի ողորմութեան քում,  
և հանգո՛ այցելութեամբ ՚ի լոյս երեսաց  
քոց: (ԵՒԷ ԿԵՂԴԱՆԻ) Փրկեա՛ զնա յամենայն  
որոգայթից հոգւոյ և մարմնոյ:

Յիշեա՛ Տէ՛ր եւ զայնոսիկ՝ որք յանձնե-  
ցին մեզ յիշատակել յաղօթս՝ զկենդանիս  
եւ զհանգուցեալս. կառավարեա՛ զկամս  
հայցմանց նոցա և զմերս՝ ընդ ուղղորդն և  
որ լին է փրկութեամբ: Եւ վարձատրեա՛

պատարագին ընծան մատուցանողները եւ ասոնց պարգաւէ պէտքերն ու օգտակարներն:

Յիշէ՛ Տէր եւ ողորմէ՛, եւ օրհնէ՛ ուխտաւորներն եւ քու սուրբ եկեղեցւոյդ պտղատուններն ու ողորմածութեամբ աղքատները հոգացողները. եւ քու բնածին առատութեամբդ անոնց պարտ ու պատշաճ եղածները անոնց հատուցո՛ւր հարիւրապատիկ այս աշխարհիս մէջ եւ ՚ի հանդերձելումն:

Յիշէ՛ Տէ՛ր եւ ողորմէ՛, եւ զթա՛ հանգուցեալ հոգւոց, հանգիստ պարգեւէ՛ անոնց եւ զանոնք լուսաւորէ ու երկնից արքայութեանդ մէջ քու սուրբերուդ հետ դասաւորէ՛ ու արժանի ըրէ՛ քու ողորմութեանդ:

Յիշէ՛ Տէր եւ քու ծառայիդ Կաթաղիկի (Ա. Ա) հոգին (ԵՒԷ ԶԶԷԿԵԼ) եւ քու մեծ ողորմութեանդ համեմատ ողորմէ՛ անոր եւ այցելութեամբ հանգչեցուր զայն քու երեսացդ յուսոյն մէջ: (ԵՒԷ ԿԵԶԿԵԶԻ Ե) Զմնիկա փրկէ հոգւոյ եւ մարմնոյ որոգայթներէն:

Յիշէ՛ Տէ՛ր եւ կենդանիներէն ու ննջեցեալներէն զանոնք, որոնց աղօթքի մէջ յիշատակուիլը յանձնարարուած է մեզ: Անոնց խնդրուածոց կամքը ու մերինն ալ կառավարէ՛, ուղղէ՛ զէպ ի շիտակը, զէպ ի փրկաւէտն: Եւ անանց ու երանելի բարութիւններդ

բոլորեցունց զանանց և զերանելի բարութեանսդ : Եւ զտեալ զխորհուրդս մեր՝ տաճարացո՛ր յընդունակութիւն մարմնոյ և արեան Միածնի քոյ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի : Ընդ որում քեզ Հօր ամենակալի , հանդերձ կենդանարար և ազատիչ Սուրբ Հոգւովդ՝ վայելէ փառք , իշխանութիւն և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Արհէ .— Օրհնեա՛ , Տէ՛ր :

Քնչ .— Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ և Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ \* ձեզ ընդ ամենեսեանդ :

Դպ .— Ամէն . և ընդ հոգւոյդ քում :

Արհէ .— Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցո՛ւք :

Դպ .— Տէ՛ր , ողորմեա՛ :

Արհէ .— Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք , ևս առաւելապէս զՏէր աղաչեսցո՛ւք :

Դպ .— Տէ՛ր , ողորմեա՛ :

Արհէ .— Վասն մատուցեալ սուրբ և աստուածային պատարագիս , որ 'ի վերայ սրբոյ սեղանոյս զՏէր աղաչեսցո՛ւք :



պարգեւէ՛ ամենուն: Եւ մեր խորհուրդները մաքրելով՝  
քու միածին Որդւոյդ, մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի  
Քրիստոսի մտրմնոյն ու արեան մասնակցութեանն  
արժանի տաճարն ըրէ՛: Որու հետ քեզ, ամենակալ  
Հայր Աստուծոյդ, կենարար ու ազատիչ սուրբ Հոգ-  
ւոյդ հետ՝ կը վայելէ փառք, իշխանութիւն ու պա-  
տիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.  
Ամէն:

Ս.—Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք.—Եւ մեծին Աստուծոյս ու մեր Փրկչին Յիսու-  
սի Քրիստոսի ողորմութիւնն ըլլայ ձեզ ✠ ամենուդ:

Դ.—Ամէն. եւ քու հոգւոյդ համար եւս:

Ս.—Ամէն. եւ խաղաղութեան համար եւս աղա-  
չենք Տիրոջ:

Դ.—Տէ՛ր ողորմէ՛:

Ս.—Ամէն սուրբերով, զորս յիշատակեցինք, եւս  
առաւել աղաչենք Տիրոջ:

Դ.—Տէ՛ր ողորմէ՛:

Ս.—Այս սուրբ սեղանիս վրայի՛ մատուցուած  
սուրբ ու աստուածային անմահ պատարագիս միջո-  
ցաւ աղաչենք Տիրոջ:

Գղ. — Տէ՛ր : ողորմեա՛ :

Սրկէ. — Որպէսզի Տէր Աստուած մեր ,  
որ ընկալաւ զոս 'ի սուրբ յերկնային և  
յիմանալի իւր մատուցարանն , և զփոխա-  
նակն առաքեսցէ առ մեզ զշնորհս և զպար-  
գեւս Հոգւոյն Սրբոյ , զՏէր աղաչեսցո՛ւք :

Գղ. — Տէ՛ր ողորմեա՛ :

Սրկէ. — Ընկալ կեցո՛ , և ողորմեա՛ , և  
պահեա՛ զմեզ Տէ՛ր քոյին շնորհիւզ :

Գղ. — Կեցո՛ , Տէ՛ր և ողորմեա՛ :

Սրկէ. — ԶԱմենասրբունի զԱստուածա-  
ծինն , զմիշտ Կոյսն Մարիամ , հանդերձ  
ամենայն սրբովք յիշելով . զՏէր աղաչե-  
ցո՛ւք :

Գղ. — Յիշեա՛ Տէ՛ր , և ողորմեա՛ :

Սրկէ. — Եւ եւս և վասն միաբանութեան  
ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ . զՏէր  
աղաչեսցո՛ւք :

Գղ. — Տէ՛ր , ողորմեա՛ :

Սրկէ. — Զանձինս մեր և զմիմեանս  
Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արաս-  
ցո՛ւք :

Գղ. — Քեզ Տեառնդ յանձն եղիցո՛ւք :

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛:

Ս.—Որպէս զի՝ զասիկա իր սուրբ, երկնային ու աննիւթական մատուցարանն ընդունող մեր Տէր Աստուածն՝ ասոր փոխարէն մեզ զրկէ Հոգւոյն Սրբոյ շնորհներն ու պարգեւներն. աղաչե՛նք Տիրոջ:

Դ.—Տէ՛ր, ողորմէ՛:

Ս.—Ընդունէ՛. ապրեցո՛ւր, եւ ողորմէ՛. եւ պահէ՛ զմեզ, Տէ՛ր, քու շնորհքովդ:

Դ.—Ապրեցո՛ւր, Տէ՛ր, եւ ողորմէ՛:

Ս.—Ամենասուրբ Աստուածածինը, միշտ Կոյս Մարիամն, ամէն սրբոց հետ յիշելով՝ աղաչե՛նք Տիրոջ:

Դ.—Յիշէ՛ Տէ՛ր, եւ ողորմէ՛:

Ս.—Եւ մեր նշմարիտ ու սուրբ հաւատքին միաբանութեան համար եւս աղաչե՛նք Տիրոջ:

Դ.—Տէ՛ր ողորմէ՛:

Ս.—Մեր անձերն ու մէկզմէկ յանձնե՛նք ամենակալ Տէր Աստուծոյ:

Դ.—Քեզ, Տէր Աստուծոյդ կը յանձնուինք:

Աբիէ.— Ողորմեա՛ց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ ինծի ողորմութեան քում: Ասասցո՛ւք ամենեքեան միաբանութեամբ:

Դպ.— Տէ՛ր ողորմեա՛, Տէ՛ր ողորմեա՛, Տէ՛ր ողորմեա՛:

Քհչ.— (Ի թ. թ. 1-ի) Աստուած ճշմարտութեան և Հայր ողորմութեան, գոհանամք զքէն, որ ՚ի վեր քան զերանելի նահապետացն՝ զմեզ պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զքնութիւն: Վասն զի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ Հայր հաճեցար անուանիլ զթալով: Եւ այժմ, Տէ՛ր, ազաչեմք զքեզ՝ զայսպիսի առ ՚ի քէն զնորոգ և զպատուական անուանադրութեանս շնորհ՝ որ ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո՛ ՚ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ:

Աբիէ.— Օրհնեա՛ Տէ՛ր:

Քհչ.— Եւ տո՛ւր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ, երկնաւորդ Հա՛յր, երգել և ասել:

Դպ.— Հա՛յր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն

Ս.—Մեր Տէր Աստուածը, մեզ ողորմէ՛ք քու մեծ ողորմութեանդ համեմատ: Ըսենք ամենքնիս միարանութեամբ:

Դ.— Տէ՛ր ողորմէ՛. Տէ՛ր ողորմէ՛. Տէ՛ր ողորմէ՛.

.—Ք (𐌺𐌹𐌸𐌹) — Աստուած նշմարտութեան ու Հայր ողորմութեան, կը գոհանանք քեզմէ, որ մեր մեղաւորացս, բնութիւնն աւելի եւս մեծարեցիր քան երանելի նահապեաներունը: Որովհետեւ անոնց հանդէպ կոչուեցար Աստուած, իսկ մեզ հանդէպ, Հայր կոչուիլ հաճեցար գթալով: Եւ հիմակ, Տէ՛ր, քեզ կ'աղաչենք, քեզմէ պարգեւուած այսպիսի նոր ու պատուական անուանադրութեան շնորհն՝ օրէ օր պայծառացնելով ծաղկեցուր քու սուրբ եկեղեցւոյդ մէջ:

Ս.—Օրհնէ՛, Տէ՛ր:

Ք.— Եւ տո՛ւր մեզ համարձակածայն բարբառով բանալ մեր բերանը, քեզ աղաչել, երկնաւոր Հայր, երգել ու ըսել:

Դ.— Հայր մեր, որ երկինքն ես. քու անունդ սուրբ ըլլայ. քու արքայութիւնդ գայ. քու կամքդ

քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր, և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանի՛ր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ «չճեղ» 'ի չարէ:

Քհչ. — (Ի Ձ-Ձ-հ) — Տէր տերանց, Աստուած աստուծոց, թագաւոր յաւիտեանական, արարիչ ամենայն արարածոց, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի՛ տանի՛ր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ 'ի չարէ և ապրեցո՛ 'ի փորձութենէ:

Արհ. — Օրհնեա՛ Տէ՛ր:

Քհչ. — Զի քո է արքայութիւն և դօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն: Խաղաղութիւն \* ամենեցուն:

Ի. — Եւ ընդ հոգւոյդ քում:

Արհ. — Աստուծոյ երկիր պագեսցո՛ւք:

Ի. — Առաջի քո Տէր:

Քհչ. — (Ի Ձ-Ձ-հ) — Որ աղբիւրդ ես կենաց և բղխումն ողորմութեան, Հոգիդ Սուրբ, ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիր պագանեն Աստուածութեանդ

ըլլայ ինչպէս երկինքը. նոյնպէս երկրի վրայ. Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ այսօր. եւ թո՛ղ մեզ մեր պարտքերն ինչպէս եւ մենք կը թողունք մեր պարտապանաց. եւ մի՛ տանի՛ր զմեզ փորձութեան, այլ փրկէ՛ «ԿԵՂ» չարէն:

Ք.— (Հ—Հ—ԿԵՂ)—Տէր տերանց, Աստուած Աստուածոց թագաւոր յաւիտենական, ամէն արարածոց արարիչը, Մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Հայրը, մի՛ տանիր զմեզ փորձութեան հապա փրկէ՛ չարէն եւ ազատէ՛ փորձութենէն:

Ս.—Օրհնէ՛ Տէ՛ր:

Բ.—Որովհետեւ քուկդ է արքայութիւնն ու զօրութիւնն ու փառք յաւիտեանս. Ամէն. Խաղաղութիւն ✠ ամենեցուն:

Ս.—Եւ քու հոգւոյդ համար եւս:

Ս.—Աստուծոյ երկրպագներ:

Դ.—Տէ՛ր, քու առջեւդ,

Ք.— (Հ—Հ—ԿԵՂ)—Հոգիդ սուրբ որ կենաց աղբիւրն ես եւ ողորմութեան բղխումն, ողորմէ՛ այս ժողովրդեանս, որ խոնարհելով կ'երպրպագեն քու Աստուածութեանդ: Զատոնք պահէ՛ ամբողջ: Քու հանդերձեալ բարեացդ ժառանգութեան եւ վիճակին

քո : Պահեա՛ զսոսա ամբողջս : Տպաւորեա՛  
յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի՛ առ ՚ի  
Ժառանգութիւն և ՚ի վիճակ հանդերձելոցդ  
բարեաց :

Աբիգ. — Օրհնեա՛ Տէ՛ր :

Քհնյ. — Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ  
մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ Արբոյ և  
Հօր ամենակալի, վայելէ փառք, իշխանու-  
թիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտե-  
անս յաւիտենից. Ամէն :

Աբիգ. — Պոստուամէ՛ :

Քհնյ. — Ի Արբութիւն Արբոց :

Դդ. — Միայն Սո՛ւրբ, միայն Տէ՛ր,  
Յիսուս Քրիստոս, ՚ի փառս Աստուծոյ Հօր.  
Ամէն :

Աբիգ. — Օրհնեա՛ Տէ՛ր :

Քհնյ. — Օրհնեա՛լ Հայր Սուրբ Աստուած  
ճշմարիտ :

Դդ. — Ամէն :

Աբիգ. — Օրհնեա՛ Տէ՛ր :

Քհնյ. — Օրհնեա՛լ Որդիդ Սուրբ Աստուած  
ճշմարիտ :

Դդ. — Ամէն :

Աբիգ. — Օրհնեա՛ Տէ՛ր :



սահմանուած մարմնոյ օրինակին ձեւը տպաւորէ՝  
ասոնց հոգիներուն մէջ:

Ս.—Օրհնէ՛՛ Տէ՛ր:

Ք.—Մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի շնորհիւ, որու  
հետ, Հոգիդ Սուրբ, քեզ ու ամենակալ Հօր կը վայելէ  
փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ՝ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ս.—Պռօսիսուժէ (Մտիկ ընե՛նք):

Ք.—Սրբոց Սրբութեան համար:

Դ.—Միայն Սո՛ւրբ. միայն Տէ՛ր, Յիսուս Քրիստոս  
'ի փառս Աստուծոյ Հօր. Ամէն:

Ս.—Օրհնէ՛՛ Տէ՛ր:

Ք.—Օրհնեա՛լ Հայր Սուրբ Աստուած ճշմարիտ:

Դ.— Ամէն:

Ս.—Օրհնէ՛՛ Տէ՛ր:

Ք.—Օրհնեալ Որդիդ Սուրբ Աստուած ճշմարիտ:

Դ.— Ամէն:

Ս.—Օրհնէ՛՛ Տէ՛ր:

Քննչ. — Օրհնեա՛լ Հոգիդ Սուրբ Աստուած  
ճշմարիտ :

Դպ. — Ամէն :

Սբէք. — Օրհնեա՛ Տէ՛ր :

Քննչ. — Օրհնութիւն և փառք Հօր և  
Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և  
յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Դպ. — Ամէն, Հայր Սուրբ, Որդիդ  
սուրբ, Հոգիդ սուրբ, Օրհնութիւն Հօր և  
Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն. այժմ և միշտ և  
յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Քննչ. — (Ի շա՜շա՜հ) — Նայեա՛ց, Տէր  
մեր Յիսուս Քրիստոս. յերկնից 'ի սրբու-  
թենէ քումմէ և յաթոոոյ փառաց թագա-  
ւորութեան քոյ : Ե՛կ 'ի սրբել և 'ի կե-  
ցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս և աստ  
պատարագիս : Արժանի արա՛ տալ մեզ յա-  
նարատ մարմնոյ քումմէ և 'ի պատուական  
յարենէ, և 'ի ձեռս մեր ամենայն ժողովրդ-  
եանս :

Տէ՛ր Աստուած մեր, որ կոչեցեր զմեզ  
յանուն Միածնի Որդւոյ քոյ քրիստոնեայս,  
և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգեւոր  
աւազանաւն 'ի թողութիւն մեղաց, և ար-

Ք.—Օրհնեա՛լ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ:

Դ.—Ամէն:

Ս.—Օրհնէ՛ Տէ՛ր:

Ք.—Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Դ.—Ամէն. Հայր Սուրբ. Որդիդ Սուրբ. Հոգիդ Սուրբ. Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ք.—(Ծ...չ...էն)—Նայէ՛, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, երկինքէն քու սրբութենէդ եւ քու թագաւորութեանդ փառաց աթոռէն: Եկո՛ւր զմեզ սուրբ ընելու եւ ապրեցնելու, Դու՛ որ կը նստիս Հօր Աստուծոյ քով եւ հոս կը պատարագուիս: Արժանի ըէ՛ քու անարատ մարմինէդ ու պատուական արիւնէդ մեզ տալու եւ մեր ձեռքով ալ այս ամէն ժողովրդեան:

Տէ՛ր Աստուած մեր. որ քու Միածին Որդւոյդ անունովը զմեզ կանչեցիր քրիստոնեայ, եւ մեղաց թողութեան համար հոգեւոր աւազանով մեզ շնորհեցիր մկրտութիւնը եւ զմեզ արժանի ըրիր քու միա-

ժանի արարեր զմեզ հաղորդել սուրբ մարմնոյ և արեան Միածնի քոյ : Եւ այժմ աղաչեմք զքեզ : Տէ՛ր , արա՛ զմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն : Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և Սուրբ Հոգւոյդ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Սբկէ . — Օրհնեա՛ , Տէ՛ր :

Քհն . — Ի Սուրբ ✽ Ի Սուրբ ✽ պատուական մարմնոյ և յարենէ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի , ճաշակեսցո՛ւք սրբութեամբ , որ իջեալ 'ի յերկնից , բաշխի 'ի միջի մերում : Սա է կեանք ✽ յոյս , յարութիւն , քաւութիւն , և թողութիւն մեղաց : Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերոյ , ռաղմոս ասացէ՛ք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի , որ նստի 'ի կառսքերովբէականս :

Դո . — Տէ՛ր ողորմեա՛ . . .

Սբկէ . — Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերոյ , զպիրք , ճայնիւ քաղցրութեան զերգս հոգեւորս : Զի սմա վայել են սաղմոսք , և օրհնութիւնք , ալէլուք

ծին Որդւոյդ սուրբ մարմնոյն հաղորդուելու: Եւ հիմակ կ'աղաչենք քեզ. Տէ՛ր, զմեզ արժանի ըրէ՛, մեզ համար մեղաց թողութիւն եղող այս սուրբ խորհուրդն ընդունելու: Եւ գոհութեամբ փառաւորելու զքեզ քու Որդւոյդ եւ Սուրբ Հոգւոյդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ս. — Օրհնէ՛ Տէ՛ր:

Ք. — Մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի Սուրբ ✠ Սուրբ ✠ պատուական մարմնէն եւ արիւնէն ճաշակե՛նք սրբութեամբ, որ երկինքէն իջնելով կը բաշխուի մեր մէջ: Ասիկա է կեանք ✠ յոյս, յարութիւն, քաւութիւն ու մեղաց թողութիւն: Սաղմոս ըսէ՛ք մեր Տէր Աստուծոյն, սաղմոս ըսէ՛ք մեր այս երկնաւոր անմահ թագաւորին, որ կը նստի քերովբէական կառքերու վրայ:

Դ. — Տէ՛ր ողորմեա՛. . .

Ս. — Դպի՛րներ, սաղմոս ըսէ՛ք մեր Տէր Աստուծոյ. քաղցր ձայնով երգեցէ՛ք հոգեւոր երգեր: Որովհետեւ ասոր կը վայելեն սաղմոսներ, օրհնութիւններ, պէչուխներ ու հոգեւոր երգեր: Պաշ-

և երգք հոգեւորք: Պաշտօնեա՛յք, հանդերձ  
երգով սաղմոս ասացէ՛ք, և զՏէր յերկինս  
օրհնեցէ՛ք:

Իւր. — Օրհնեա՛լ է Աստուած:

Քրիստոս պատարագեալ բաշխի ՚ի միջի  
մերում. Ալէլուիա՛:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր և սուրբ  
արիւն իւր ցօղէ ՚ի մեզ. Ալէլուիա՛:

Մատի՛ք առ Տէր և առէ՛ք զլոյս. Ալէ-  
լուիա՛:

Ճաշակեցէ՛ք և տեսէ՛ք, զի քաղցր է Տէր.  
Ալէլուիա՛:

Օրհնեցէ՛ք զՏէր յերկինս. Ալէլուիա՛:

Օրհնեցէ՛ք զնա ՚ի բարձունս. Ալէլուիա՛:

Օրհնեցէ՛ք զնա ամենայն հրեշտակք նո-  
րա. Ալէլուիա՛:

Օրհնեցէ՛ք զնա ամենայն զօրութիւնք  
նորա. Ալէլուիա՛:

Քհնյ. — (Ի ծածուկ) — Զո՛ր օրհնու-  
թիւն կամ զո՛ր զօհութիւն ՚ի վերայ հա-  
ցիս և բաժակիս ասասցուք. այլ, Յիսու՛ս,  
զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբզ և  
Ամենասուրբ Հոգւովդ. այժմ և միշտ և յա-  
ւիտեանս յաւիտենից. Ամէն:

տօնեա՛ներ, երգով սաղմոս ըսէ՛ք եւ օրհնեցէ՛ք երկինքն եղող Տէրը:

Դ. — Օրհնեա՛լ է Աստուած:

Քրիստոս պատարագուելով կը բաշխուի մեր մէջ.  
Ալէլուիա՛:

Իր մարմինը մեզ կուտայ իբր կերակուր եւ իր սուրբ արիւնը կը ցօղէ մեր մէջ. Ալէլուիա՛.

Մօտեցէ՛ք Տիրոջ եւ առէ՛ք լոյսն. Ալէլուիա՛:

Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, զի քաղցր է Տէր. Ալէլուիա՛:

Օրհնեցէ՛ք երկինքն եղող Տէրն, Ալէլուիա՛:

Օրհնեցէ՛ք զանիկա ՚ի բարձունս. Ալէլուիա՛:

Օրհնեցէ՛ք զանիկա անոր ամէն հրեշտակներն.

Ալէլուիա՛:

Օրհնեցէ՛ք զանիկա անոր ամէն զօրութիւններն.

Ալէլուիա՛:

Բ. — (Հա՛հա՛-իէ՛ն) — Ո՛րպիսի օրհութիւն կամ ո՛րպիսի գոհութիւն ըսենք այս հացիս եւ բաժակիս վրայ, բայց, Յիսու՛ս, զքեզ միայն կ'օրհնենք Հօր Աստուծոյդ եւ Ամենասուրբ Հոգւոյդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, Ամէն:

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես  
Քրիստոս Որդի Աստուծոյ, որ բարձեր զմեզս  
աշխարհի:

— Լրումն \* Հոգւոյն Սրբոյ:

— Գոհութիւն քեզ, Քրիստոս:

Հայր սուրբ, որ անուանեցեր զմեզ անուա-  
նակցութեամբ Միածնի քոյ, և լուսաւորե-  
ցեր մկրտութեամբ Հոգեւոր աւազանին: Արժանի արա՛ ընդունել զսուրբ խորհուրդս  
զայս մեզ ՚ի մեզաց թողութիւն: Տպաւորե-  
ա՛ն ՚ի մեզ զչնորհս Հոգւոյդ Սրբոյ՝ որպէս  
՚ի սուրբ առաքեալսն, որք ճաշակեցին և  
եղեն մաքրիչք ամենայն աշխարհի: Եւ արդ՝  
Տէ՛ր, Հայր բարերար, զհաղորդութիւնս այս  
մասնաւորեա՛ն ճաշակման երեկոյին աշա-  
կերտացն՝ բառնալով զխաւար մեզաց իմոց:  
Մի՛ հայի՛ր յանարժանութիւնս իմ, և մի՛  
արգելու՛ր զչնորհս Հոգւոյդ Սրբոյ: Այլ ըստ  
անբաւ մարդասիրութեան քոյ, պարգեւեա՛ն  
զսա քաւիչ մեզաց, լուծիչ յանցանաց: Որ-  
պէս խոստացաւ և ասաց Տէ՛ր մեր Յիսուս  
Քրիստոս, թէ որ ուտէ զմարմին իմ, և  
ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան: Արդ  
արա՛ զսա մեզ ՚ի քաւութիւն, զի որք կե-



Կը խոստովանիմ եւ կը հաւատամ, թէ դուն ես Քրիստոսն, Աստուծոյ Որդին, որ ջնջեցիր աշխարհի մեղքերը:

— Լրումն ✠ Հոգւոյն Սրբոյ:

— Գոհութիւն քեզ, Քրիստո՛ս:

Հա՛յր սուրբ, որ քու միածին Որդւոյդ անուանակցութեամբը զմեզ կանչեցիր քրիստոնեայ եւ լուսաւորեցիր հոգեւոր աւագանին մկրտութեամբն: Արժանի ըրէ՛ մեզ համար մեղաց թողութիւն եղող այս սուրբ խորհուրդս ընդունելու: Տպաւորէ՛ մեր վրայ Հոգւոյդ Սրբոյ շնորհքն, ինչպէս սուրբ առաքելոց վրայ, որոնք ճաշակեցին եւ եղան ընդհանուր աշխարհի մաքրիչներն: Եւ արդ՛ Տէ՛ր, Հա՛յր բարերար, այս հաղորդութիւնս մասնաւորէ՛ աշակերտաց երեկոյեան ճաշակման՝ փարատելով իմ մեղացս խաւարն: Մի՛ նայի՛ր իմ անարժանութեանս ու մի՛ արգիլէ՛ր Հոգւոյդ Սրբոյ շնորհքը: Հապա քու անբաւ մարդասիրութեանդ համեմատ զասիկա պարգեւէ իբր քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց: Ինչպէս որ խոստացաւ ու ըսաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, թէ՛ ով որ իմ մարմինս ուտէ ու իմ արիւնս խմէ պիտի ապրի յաւիտեան: Արդ զասիկա ըրէ՛ քաւութեան համար, որպէս զի անոնք, որ ասկէ ուտեն ու խմեն, թող

րիցենն և արբցենն 'ի սմանէ՝ հանցենն զօրհնութիւնն և զփառս Հօր և Որդւոյ, և Հոգւոյդ Սրբոյ. այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն.

Խաղաղութիւնն \* ամենեցունն :

Գոհանամ զքէն, Քրիստոս թագաւոր, որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդել սուրբ մարմնոյ և արեան քո: Եւ այժմ, Տէ՛ր, աղաչեմ զքեզ, մի՛ լիցի սա ինձ 'ի դատապարտութիւնն. այլ 'ի քաւութիւնն և 'ի թողութիւնն մեղաց, յառողջութիւնն հոգւոյ և մարմնոյ, և 'ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան: Որպէս զի սրբեսցէ սա զչունչս իմ, զհոգի և զմարմինս իմ, և տրասցէ զիս տաճար և բնակարան Ամենասուրբ Երրորդութեան: Զի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Յովհաննէս Ուկեբէրանին:

Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ: Տէ՛ր Աստուած իմ, զի զիս անարժանս արժանացուցեր յաւուրս յայսմիկ՝

մատուցանեն օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ  
եւ Սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն ✠ ամենեցուն:

Կը գոհանամ քեզմէ Քրիստո՛ս թագաւոր, որ զիս,  
անարժանս, արժանի ըրիր քու սուրբ մարմնոյդ ու  
արեանդ հաղորդուելու: Եւ հիմա, Տէ՛ր, կ'աղաչեմ  
քեզ, ասիկա թո՛ղ չըլլայ ինձ դատապարտութեան  
համար, հապս (ընդ հակառակը) քաւութեան ու մե-  
ղաց թեղութեան, հոգւոյ եւ մարմնոյ առողջութեան  
եւ առաքինական ամէն գործոց կատարման համար:  
Որպէս զի ասիկա սրբէ շունչս, հոգիս ու մարմինս.  
եւ զիս ընէ Ամենասուրբ Երրորդութեան տաճար ու  
բնակարան: Որ քու սուրբերուդ հետ արժանի ըլլամ  
փառաւորել զքեզ Հօր Աստուծոյ եւ Սուրբ Հոգւոյդ  
հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Յւզհաննա՝ Ուխեբերանի:

Կը գոհանամ ու կը մեծացուցանեմ ու կը փա-  
ռաւորեմ զքեզ, Տէ՛ր Աստուած իմ, որ զիս, անար-  
ժանս, արժանի ըրիր այսօր Աստուածային եւ սու-

հաղորդակից լինել Աստուածային և սու-  
կալի խորհրդոյ, անարատ մարմնոյդ և պատ-  
ուական արեանդ: Վասն այսորիկ զսոսա  
'ի բարեխօսութիւն ունելով, աղաչեմ, յա-  
մենայն աւուրս և 'ի ժամանակս կենաց  
իմոց՝ ընդ սրբութեան քո պահեա՛ զիս:  
Որպէս զի յիշելով զբարեգլթութիւնս քո,  
և կենդանի լինել ընդ քեզ՝ որ վասն մեր  
չարչարեցար և մեռար և յարեար: Մի՛  
մերձեցի՛. Տէ՛ր իմ և Աստուած, խորտա-  
կիչն՝ կնքելով անձին իմոյ պատուական  
արեամբդ քով: Ամենակարող, մաքրեա՛  
զիս սոքօք յամենայն մեռելոտի գոր-  
ծոց իմոց, որ միայնդ ես անմեղ: Ամրացո՛՛  
զկեանս իմ, Տէ՛ր, յամենայն փորձութենէ,  
և զպատերազմողն իմ դարձո՛ յետս պատ-  
կառեալ և ամաչեցեալ, որչափ յառնէ 'ի  
վերայ իմ: Ամրացո՛՛ զգնացս մտաց և լեզ-  
ուի իմոյ: Լե՛ր հանապազորդ ընդ իս ըստ  
անսուտ խոստմանց քոց, թէ որ ուտէ զմար-  
մին իմ և ըմպէ զարիւն իմ՝ նա յիս բնա-  
կեսցէ, և ես 'ի նմա: Դու ասացեր, մար-  
դասէ՛ր, կացո՛ զբանս Աստուածային ան-  
լուծանելի հրամանաց քոց: Քանզի դու  
ես Աստուած ողորմութեան և գթութեան

կալի խորհրդոյն, անարատ մարմնոյդ ու պատուական արեանդ հաղորդակից ըլլալու: Ասոր համար զասոնք բարեխօս բռնելով կ'աղաչեմ, իմ կենացս ամէն օրերն ու ժամանակը քու սրբութեանդ համեմատ պահէ՛ զիս: Որպէս զի յիշեմ քու բարեգթութիւնդ ու ապրիմ քեզ հետ, որ մեզ համար չարչարուեցար ու մեռար եւ յարութիւն առիր: Տէ՛ր իմ եւ Աստուած. կնքէ՛ իմ անձս քու պատուական արիւնովդ, որ խորտակիչը (սատանան) չմօտենայ: Ամենակարող Փրկիչ իմ, Դու որ միակ անմեղ ես, ասոնցմով մաքրէ՛ զիս իմ ամէն մահառիթ գործերէս: Զօրացո՛ւր իմ կեանքս, Տէ՛ր, ամէն փորձութեանց դէմ, եւ ինձ դէմ պատերազմողն ետ դարձու՛ր պատկառած ու ամօթահար, ամէն անգամ որ ինձ դէմ ելլէ: Զօրացո՛ւր իմ մտացս ու լեզուիս շարժումները: Միշտ ինձ հետ եղի՛ր քու անսուտ խրատմանցդ համեմատ, թէ՛ ով որ կ'ուտէ իմ մարմինս ու կը խմէ իմ արիւնս՝ անիկա կը բնակի յիս եւ ես՝ ՚ի նմա: Դուն ըսիր, մարդասէ՛ր Փրկիչ. կատարէ՛ քու Աստուածային անլուծանելի հրամանացդ խօսքերը: Որովհետեւ Դուն ես ողորմութեան ու գթութեան ու մարդասիրութեան եւ ամէն

և և մարդասիրութեան և պարզելիչ ամե-  
նայն բարեաց, և քեզ վայելէ փառք հան-  
դերձ Հարբդ և Ամենասուրբ Հոգևովդ, այժմ  
և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

— Մարմին քո անապական լիցի \* ինձ  
'ի կեանս :

— Ամէն :

— Եւ սուրբ արիւն \* քո 'ի քաւութիւն  
և 'ի թողութիւն :

— Ամէն :

(Թի- պարբերութի մէջ երէ Ս. Հարբդ-  
նիւն բաշխուի :)

— Խոստովանիմ առաջի Աստուծոյ ամե-  
նակարողի և Երանուհւոյ Մարիամու միշտ  
Կուսին, երանելոյն Միքայելի հրեշտակա-  
պետին, երանելոյն Յովհաննու Մկրտչին,  
սրբոց առաքելոցն Պետրոսի, և Պօղոսի, և  
սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և  
ամենայն սրբոց, (Եւ առաջի +, հա՛յր սուրբ),  
քանզի մեզայ յոյժ խորհրդով, բանիւ և գոր-  
ծով վա՛յ ինձ, վա՛յ ինձ և յաւէտ վա՛յ ինձ :

Ոգորմեսցի \* ձեզ մարդասէրն Աստուած,  
և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցա-  
նաց ձերոց, անցելոյն և այժմուս և յառա-

բարեաց պարգեւիչ Աստուածն. եւ քեզ կը վայելէ  
փառք Հօր Աստուծոյդ ու Ամենասուրբ Հոգւոյդ հետ.  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

—Քու անապական մարմինդ ըլլայ ✠ ինձ կեանք:

—Ամէն:

—Եւ քու սուրբ արիւնդ ✠ քաւութիւն ու մե-  
ղաց թողութիւն:

—Ամէն:

(Թի- պարգեւիչի հեջ երեւ. Նորոգութիւն Բաւիտի:)

—Կը խոստովանիմ ամենակարող Աստուծոյ առ-  
ջեւ ու Երանուհի Մարիամու միշտ Կուսին, երանելի  
Միքայէլ հրեշտակապետին, երանելի Յովհաննէս  
Մկրտչին, Պետրոս ու Պօղոս սուրբ առաքեալներուն  
եւ մեր սուրբ Հօր Գրիգոր Լուսաւորչին ու ամէն սրբ-  
բոց առջեւ (Ե- ՀՅԵ ԲԵՐԷ, ԲԵՐԷԵՆ) որովհետեւ  
շատ մեղանշեցի խորհրդով, խօսքով ու գործով. վա՛յ  
ինձ, վա՛յ ինձ եւ յաւէտ վա՛յ ինձ:

Մարդասէրն Աստուած ողորմի ✠ ձեզ եւ թողու-  
թիւն շնորհէ անցեալ եւ արդի ձեր ամէն յանցանք-  
ներուն եւ փրկէ զձեզ գալիքէն ու զձեզ հաստատէ

ջակայէն փրկեսցէ զձեզ , և հաստատեսցէ  
յամենայն գործս բարիս և հանգուցէ զձեզ  
'ի հանդերձեալ կեանս :

Սրկէ. — Երկիւղիւ և հաւատով յառաջ  
մատի'ք և սրբութեամբ հաղորդեցարո՛ւք  
(Աստուգէ՛ + Տեղայ Աստու-ժոյ) :

Քննչ. կամ Սրկէ. — Հաւատամ 'ի Հայր  
Սուրբ Աստուած ճշմարիտ :

Ամէն :

Հաւատամ յՈրդին Սուրբ Աստուած ճշ-  
մարիտ :

Ամէն :

Հաւատամ 'ի Հոգին Սուրբ Աստուած  
ճշմարիտ :

Ամէն :

Սոստովանիմ և հաւատամ՝ զի սա է  
ճշմարիտ մարմին և արիւն Տեառն մերոյ  
Յիսուսի Քրիստոսի , որ բառնայ զմեզս աշ-  
խարհի :

Քննչ. — Տէ՛ր , չեմ բաւական՝ եթէ ընդ  
յարկաւ իմով մտանիցես , այլ ասա՛ բանիւ  
եւ բժշկեսցի հոգի իմ :

Տէ՛ր , չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ  
իմով մտանիցես , այլ ասա՛ բանիւ և բժշ-  
կեսցի հոգի իմ :



ամէն բարի գործոց մէջ եւ հանգիստ պարգեւէ ձեզ հանդերձեալ կեանքին մէջ:

Ս. — Երկիւղիւ եւ հաւատքով յառաջ մտնեցէ՛ք ու սրբութեամբ հաղորդուեցէ՛ք (Ը՛հէ՛ + Տեղա՛յ Աստուծո՛յ):

Ք. Կա՛մ Ս. — Կը հաւատամ Սուրբ Հօր, ճշմարիտ Աստուծոյ:

Ամէն:

Կը հաւատամ Սուրբ Որդւոյ, ճշմարիտ Աստուծոյ:

Ամէն:

Կը հաւատամ Սուրբ Հոգւոյ, ճշմարիտ Աստուծոյ:

Ամէն:

Կը խոստովանիմ եւ կը հաւատամ, որ ասիկա է ճշմարիտ մարտիրոսն ու արիւնը Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ կը ջնջէ աշխարհի մեղքերը:

Ք. — Տէ՛ր, չեմ բաւական, որ իմ, յարկիս տակ մտնես, հապա ըսէ՛ խօսքով, ու կը բժշկուի իմ հոգիս:

Տէ՛ր, չեմ բաւական, որ իմ յարկիս տակ մըտնես, հապա ըսէ՛ խօսքով ու կը բժշկուի իմ հոգիս:

Տէ՛ր, չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ  
իմով մտանիցես, այլ ասա՛ բանիւ և բժըշ-  
կեսցի հոգի իմ :

Մարմին Տեառն մերոյ Յիսուսի \* Քրիս-  
տոսի, լիցի՛ քեզ փրկութիւն և առաջնորդ  
յանվախճան ՚ի կեանս :

Ամէն :

Դպիր+ է- շողովո-րդն . — Աստուած մեր  
և Տէր մեր երեւեցաւ մեզ : Օրհնեա՛լ եկ-  
եալ անուամբ Տեառն :

Քհչ . — Կեսցո՛ Տէ՛ր \* զժողովուրդս քո ,  
և օրհնեա՛ զժառանգութիւնս քո , հովուեա՛  
և բարձրացո՛ զսոսա՛ յայսմ հետէ մինչեւ ՚ի  
յաւիտեան :

Դպ . — Լցաք ՚ի բարութեանց քոց ,  
Տէ՛ր, ճաշակելով զմարմին քո և զարիւն :  
Փա՛ռք ՚ի բարձունս կերակրողիդ զմեզ ,  
Որ հանապազ կերակրես զմեզ , առաքեա՛  
՚ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւն : Փա՛ռք  
՚ի բարձունս կերակրողիդ զմեզ :

Քհչ . — (Ի ծածուկ) — Գոհանամք զքէն ,  
Հա՛յր ամենակալ , որ պատրաստեցեր մեզ  
նաւահանգիստ սուրբ զեկեղեցի , տաճար  
սրբութեան , ուր փառաբանի սուրբ Երրոր-  
դութիւնդ : Ալէլուիա՛ :

Տէ՛ր, չեմ բաւական, որ իմ յարկիս տակ մըտնես, հապա ըսէ՛ խօսքով ու կը բժշկուի իմ հոգիս:

Տեառն մերոյ Յիսուսի ✱ Քրիստոսի մարմինն ըլլայ քեզ փրկութիւն ու առաջնորդ անվախճան կենաց:

Ամէն:

Դ. եւ ժ.— Աստուած մեր եւ Տէր մեր, երեւեցաւ մեզ. Օրհնեա՛լ է Տիրոջ անունով եկողն:

Բ.— Տէ՛ր ✱ ապրեցո՛ւր քու ժողովուրդդ, օրհնէ՛ քու ժառանգութիւնդ. կառավարէ՛ ու բարձրացո՛ւր զասոնք ասկէ ետքը մինչեւ յաւիտեան:

Դ.— Տէ՛ր, քու մարմինդ ու արիւնդ ճաշակելով լեցուեցանք քու բարութիւններովդ: Փա՛նք ՚ի բարձունս զմեզ կերակրողիդ: Դու՛ որ միշտ կը կերակրես զմեզ, զրկէ՛ մեզ քու հոգեւոր օրհնութիւնդ: Փա՛նք ՚ի բարձունս զմեզ կերակրողիդ:

Բ. (Ք-Ք-Ք-Ք) — Կը գոհանանք քեզմէ, Հա՛յր ամենակալ, որ մեզ իբր նաւահանգիստ պատրաստեցիր սուրբ եկեղեցին, սրբութեան տաճարն, ուր կը փառաբանուի Սուրբ Երրորդութիւնդ: Ալէլուիա՛:

Գոհանամք զքէն, Քրիստո՛ս թագաւոր,  
որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կե-  
նարար մարմնով և արեամբդ քով սրբով.  
Ալէլուիա՛ :

Գոհանամք զքէն, Հոգիդ ճշմարիտ, որ  
նորոգեցեր սուրբ զեկեղեցի, անարատ պահե-  
եա՛ հաւատով Երրորդութեանդ յայսմհետէ  
մինչեւ յաւիտեանս. Ալէլուիա՛ :

Աբէ՛՛ք. — Ամէն. Եւ ևս խաղաղութեան  
զՏէր աղաչեսցո՛ւք :

Ի՞պ. Ե- Ճողովս-բո՛ն, — Տէ՛ր, ողորմեա՛ :

Աբէ՛՛ք. — Եւ եւս հաւատով բնկալեալք  
յԱստուածային, Սուրբ, յերկնային, յան-  
մահ, յանարատ և յանապական խորհրդոյս,  
զՏեառնէ գոհացարո՛ւք :

Ի՞պ. — Գոհանամք զքէն, Տէ՛ր, որ կե-  
րակրեցեր զմեզ, յանմահական սեղանոյ քո :  
Բաշխելով զմարմին և զարիւնդ ՚ի փրկու-  
թիւն աշխարհի, և կեանք անձանց մերոց :

Քհնյ. — (Ի ճաճո՛ւկ) — Գոհանամք զքէն,  
Քրիստոս Աստուած, որ զայսպիսի ճաշա-  
կումն բարութեան շնորհեցեր մեզ ՚ի սըր-  
բութիւն կենդանութեան : Սովիմք պահեա՛  
զմեզ սուրբս և անարատս՝ բնակեալ զմեօք



քո Աստուածային խնամօքդ : Հովուեա՛  
զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց և  
բարերարաց : Որով ամրացեալք յամենայն  
բանսարկուին ընդդիմութեանց , քումդ ևեթ  
արժանի եղիցուք լսել ձայնի : Եւ քեզ  
միայնոյ քաջայաղթ և ճշմարիտ Հովուիդ  
հետեւել , և առ 'ի քէն ընդունել զպատ-  
րաստեալ տեղի յարքայութեանդ երկնից ,  
Աստուած մեր և Տէր մեր և Փրկիչ Յիսուս  
Քրիստոս : Որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ  
Սրբոյ Հոգւոյդ . այժմ և միշտ և յաւիտեանս  
յաւիտենից . Ամէն :

Խաղաղութիւն ✱ ամենեցուն :

Անքնին , անհաս երրեակ ինքնութեանդ,  
հաստիչ , ընդունող և անբաժանելի Սուրբ  
Երրորդութեանդ , վայելէ փառք , իշխանու-  
թիւն և պատիւ . այժմ և միշտ և յաւի-  
տեանս յաւիտենից . Ամէն :

Սբէ՛ք . — Օրհնեա՛ Տէ՛ր :

Քհնյ . — Որ օրհնես զայնոսիկ , որք օրհ-  
նեն զքեզ , Տէր , և սուրբ առնես զյուսաց-  
եալս 'ի քեզ : — «Օրհնեա՛լ է Աստուած» :

խնամքներովդ մեր մէջ բնակելով: Կառավարէ՛ զմեզ  
քու սուրբ ու բարերար կամացդ շաւղին մէջ: Որով  
չար սատանային ամէն հակառակութեանց դէմ զօ-  
րացած, արժանի ըլլանք միայն քու ծայնդ լսելու:  
Եւ քեզ, միակ քաջայաղթ եւ նշմարիտ Հովուիդ հե-  
տեւելու, եւ երկնից արքայութեանդ մէջ քեզմէ  
պատրաստուած տեղն ընդունելու, Աստուած մեր եւ  
Տէ՛ր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս: Որ օրհնեալ ես  
Հօր Աստուծոյ եւ Հոգւոյն Սրբոյ հետ. այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն ✠ ամենեցուն:

Անքննելի, անիմանալի, երբեակ էութեանդ. արա-  
րիչ, ընդունող ու անբաժանելի սուրբ Երրորդութեանդ  
կը վայելէ փառք, իշխանութիւն ու պատիւ. այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ս.—Օրհնէ՛ Տէ՛ր:

Ք.—Դու, որ կ'օրհնես զանոնք, որ կ'օրհնեն  
զքեզ Տէ՛ր, եւ սուրբ կ'ընես քեզ յուսացողներն: —  
ՅՕՐՀՆԵՄԷ Ե ԱՆՐԱՆՈՒԹՅՈՒՆ:

Կեցո՛ղ զժողովուրդս քո և օրհնեա՛լ զժա-  
ռանգութիւնս քո : Զլրումն եկեղեցւոյ քո  
պահեա՛լ : — «Ա.Ք.Ն.» :

Սրբեա՛լ զսոսա, որք ողջունեցին սիրով  
զվայելչութիւն տան քոյ :

Իու զմեզ փառաւորեա՛լ Աստուածային  
զօրութեամբ քով և մի՛ թողո՛ւր զյուսա-  
ցեալքս ՚ի քեզ : — «Ա.Ք.Ն.» :

Զխաղաղութիւն քո պարգեւեա՛լ ամե-  
նայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից,  
թագաւորաց քրիստոնէից, և զինուորեալ  
մանկանց նոցա և ամենայն ժողովրդեանս :  
— «Ա.Ք.Ն.» :

Զի ամենայն տուրք բարիք և ամենայն  
պարգեւք կատարեալք ՚ի վերուստ են իջ-  
եալ առ ՚ի քէն, որ ես Հայր լուսոյ : Եւ  
քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պա-  
տիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-  
նից. Ամէն :

Ի. — Ա.Ք.Ն. Եղիցի՛ անուն Տեառն օրհ-  
նեա՛լ, յայսմհետէ մինչեւ յաւիտեան :

Եղիցի՛ անուն Տեառն օրհնեա՛լ յայսմ-  
հետէ մինչեւ յաւիտեան :

Եղիցի՛ անուն Տեառն օրհնեա՛լ, յայսմ-  
հետէ մինչեւ յաւիտեան :



Ապրեցո՛ւր քու ժողովուրդդ եւ օրհնէ՛ քու ժառանգութիւնդ: Քու եկեղեցւոյդ ամբողջութիւնը պահէ՛:—«Ա.Տ.Է.»:

Սուրբ ըրէ՛ զասոնք, որ սիրով ողջունեցին քու տանդ վայելչութիւնը:

Դու զմեզ փառաւորէ՛ քու Աստուածային զօրութեամբդ եւ ձեռքէ մի՛ թողո՛ւր քեզ յուսացողներս:—«Ա.Տ.Է.»:

Քու խաղաղութիւնդ պարգեւէ՛ ամէն աշխարհի. եկեղեցիներուն, քահանայից, քրիստոնեայ թագաւորաց ու անոնց զինուորեալ զօրացն եւ այս ամէն ժողովրդեանս: «Ա.Տ.Է.»:

Որովհետեւ ամէն բարի տուրք ու ամէն կատարեալ պարգեւներ իջած են վերէն՝ քեզմէ, որ լուսոյ Հայր ես: Եւ քեզ կը վայելէ փառք, իշխանութիւն ու պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Դ.—Ա.Տ.Է.. Օրհնեա՛լ ըլլա՛յ Տիրոջ անունն, ասկէ վերջը մինչեւ յաւիտեան:

Օրհնեա՛լ ըլլա՛յ Տիրոջ անունն, ասկէ վերջը մինչեւ յաւիտեան:

Եւ օրհնեա՛լ ըլլա՛յ Տիրոջ անունն, ասկէ վերջը մինչեւ յաւիտեան:

Քհնյ. — Կատարումն օրինաց և մար-  
գարէից, զու ես Քրիստոս Աստուած Փրկիչ  
մեր: Որ լցեր զամենայն հայրակամ տնօրէ-  
նութիւն քո, լցո՛ւ և զմեզ Հոգւովդ քով  
Սրբով:

Սրէէ. — Օրթի՛ր:

Քհնյ. — Խաղաղութիւն \* ամենեցուն:

Իպ. — Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրէէ. — Երկիւղածութեամբ լուարո՛ւք:

Քհնյ. — Սրբոյ աւետարանիս «Յիսուսի  
Քրիստոսի», որ ըստ Յովհաննու (Ընդհանր-  
պէս):

Իպ. — Փա՛ռք քեզ, Տէ՛ր Աստուած մեր:

Սրէէ. — Պոսխումէ՛:

Իպ. — Ասէ Աստուած:

Քհնյ. —

Ի Հօրէն լուսոյ:

Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ  
Աստուած, և Աստուած էր Բանն: Նա էր  
'ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ նո-  
վաւ եղև, և առանց նորա եղեւ և ոչ ինչ՝ որ  
ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, և կեանքն  
էր լոյս մարդկան, և լոյսն 'ի խաւարի  
անդ լուսաւոր էր, և խաւար նմա ոչ եղեւ

—Ք.—Օրինաց ու մարգարէից կատարումը, Դու  
ես Քրիստոս, Աստուած Փրկիչ մեր: Որ կատարեցիր  
քու ամէն հայրակամ տնօրէնութիւններդ. զմեզ ալ  
լեցո՛ւր քու սուրբ Հոգւովդ:

Ս.—Օրթի:(Ուղիղ կենա՛նք):

Ք.—Խաղաղութիւն ✠ ամենեցուն:

Դ.—Եւ քու հոգւոյդ համար եւս:

Ս.—Երկիւղածութեամբ մտիկ ըրէ՛ք:

Ք.—Յովհաննու (ընդհանրապէս) Սուրբ Աւետարա-  
նէն «Յիսուսի Քրիստոսի»:

Դ.—Փա՛նք քեզ, Տէ՛ր Աստուած մեր:

Ս.—Պաշտումէ: (Մտիկ ընե՛նք:)

Դ.—Կ'ըսէ Աստուած:

Ք.—

Հուսոյ Հօրմէն:

Ի սկզբան էր Բանն, եւ Բանն էր Աստուծոյ քով.  
Եւ Աստուած էր Բանն: Անիկա 'ի սկզբան Աստուծոյ  
քով էր: Ամէն ինչ անով եղաւ, ու առանց անոր  
եղաւ եւ ոչ ինչ. ինչ որ եղաւ, Անով էր կեանքն, ու  
կեանքն էր մարդկան լոյսն, ու լոյսն այն խաւարին  
մէջ լուսաւոր էր. ու խաւարն անոր չհասաւ: Աս-

հասու : Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ ,  
անունն նմա Յովհաննէս : Սա եկն 'ի վկա-  
յութիւն՝ զի վկայեացէ վասն լուսոյն , զի  
ամենեքին հաւատասցեն նովաւ : Ոչ էր նա  
լոյսն , այլ զի վկայեացէ վասն լուսոյն : Էր  
լոյսն ճշմարիտ , որ լուսաւոր առնէ զամե-  
նայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ : Յաշ-  
խարհի էր , և աշխարհն նովաւ եղեւ , և աշ-  
խարհն զնա ոչ ծանեաւ : Յիւրսն եկն , և  
իւրքն զնա ոչ ընկալան : Իսկ որք ընկա-  
լանն զնա , ետ նոցա իշխանութիւնն որդիս  
Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանունն  
նորա . ոչք ոչ յարենէ , և ոչ 'ի կամաց մարմ-  
նոյ , և ոչ 'ի կամաց առն , այլ յԱստուծոյ  
ծնան : Եւ Բանն մարմինն եղեւ և բնակեաց  
'ի մեզ , և տեսաք զփառս նորա՝ զփառս  
իբրեւ զմիածնի առ 'ի Հօրէ , լի շնորհօք  
և ճշմարտութեամբ : ( Յովհաննէս վկայէ  
վասն նորա , ազաղակեաց և ասէ . Սա է՝  
զորմէ ասէի , որ զկնի իմ գալոցն էր , ա-  
ռաջի իմ եղեւ , զի նախ քան զիս էր : Զի 'ի  
լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք  
շնորհս փոխանակ շնորհաց : Զի օրէնքն 'ի  
ձեռն Մովսէսի տուան , շնորհքն եւ ճշմար-  
տութիւնն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի  
եղեն : )

տուժմէ զրկուած մարդ մ'եղաւ, անոր անունն՝ Յովհաննէս: Ասիկա վկայութեան համար եկաւ, որ վկայէ լուսոյն նկատմամբ, որպէս զի ամէնքը հաւատան անով: Անիկա չէր լոյսն, հապա՛ որպէս զի վկայէ լուսոյն համար: Ճշմարիտ լոյսն էր ան, որ կը լուսաւորէ աշխարհ եկող ամէն մարդ: Աշխարհի մէջ էր, եւ աշխարհս անով եղաւ, ու աշխարհը զանիկա չի ճանցաւ: Իրեններուն համար եկաւ, ու իրենները զանիկա չընդունեցան: Իսկ որոնք որ ընդունեցան զանիկա, Աստուծոյ Որդի ըլլալու իշխանութիւն տուաւ անոնց, որոնք կը հաւատան անոր անունով, որոնք ոչ արիւնէ, ոչ մարմնոյ կամքէն, եւ ոչ մարդու կամքէն, հապա Աստուծմէ ծնան: Եւ Յանն Մարմին եղաւ. ու բնակեցաւ մեր մէջ. ու տեսանք անոր փառքը, Հօրմէ եղած Միածնի փառքին պէս, լեցուն շնորհքով ու ճշմարտութեամբ: (Յովհաննէս կը վկայէ անոր նրկատմամբ եւ կ'աղաղակէ ըսելով. Սա՛ այն է որուն համար ըսած եմ. ինձմէ առաջ եղաւ, վասնզի ինձմէ առաջ էր. եւ մենք ամէնքս անոր լրութենէն առինք շնորհքի վրայ շնորհք. որովհետեւ օրէնքը տրուեցաւ Մովսէսի ձեռքով. շնորհքն ու ճշմարտութիւնն եղան Յիսուսի Քրիստոսի ձեռքով.)

Արկէ.—Փա՛ռք քեզ, Տէ՛ր, Աստուած մեր :  
Սուրբ խաչիւս աղաչեսցո՛ւք զՏէր, զի  
սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցու-  
ցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենա-  
կալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛ :  
Քհնյ. — Տէ՛ր «ղորմեա՛», Տէ՛ր «ղորմեա՛»,  
Տէ՛ր «ղորմեա՛» :

(Պահպանիչ է— ըյս հասարակեաց.) Պահ-  
պանեա՛ զժողովուրդս քո, Քրիստոս Աստ-  
ուած, ընդ հովանեաւ սուրբ և պատուա-  
կան խաչիւզ քով 'ի խաղաղութեան. Փրկեա՛  
յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն : Արժա-  
նաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ  
ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և  
միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Իպ.—Օրհնեցից զՏէր յամենայն ժամ,  
յամենայն ժամ օրհնութիւն նորա 'ի բե-  
րան իմ :

Քհնյ.— Օրհնեալք \* եղերո՛ւք 'ի շնոր-  
հաց Սուրբ Հոգւոյն, երթա՛յք խաղաղու-  
թեամբ, եւ Տէր եզիցի ընդ ձեզ ընդ ամե-  
նեսեանդ. Ամէն :

(Ի շա՞շուհ) — Տէր Աստուած Յիսուս  
Քրիստոս, ողորմեա՛ ինձ :

Ս . — Փա՛ռք քեզ, Տէ՛ր, Աստուած մեր:

Սուրբ խաչովս աղաչե՛նք Տիրոջ, որպէս զի ասով  
փրկէ զմեզ մեղքերէ. եւ իր ողորմութեան շնորհիւ  
ապրեցնէ զմեզ. Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, ապ-  
րեցու՛ր եւ ողորմէ՛:

Ք . — (Տէ՛ր «չբ՛ի», Տէ՛ր «չբ՛ի», Տէ՛ր «չբ՛ի»):

(Պահպանել եւ հաստատելու ընդ ընդ.) Պահպանէ՛  
քու ժողովուրդդ, Քրիստո՛ս Աստուած քու սուրբ եւ  
պատուական խաչիդ հովանիին տակ խաղաղու-  
թեան մէջ, Փրկէ՛ երեւելի ու աներեւոյթ թշնամիէն:  
Արժանի ըրէ՛ գոհութեամբ փառաւորելու զքեզ Հօր  
Աստուծոյ եւ Սուրբ Հոգւոյդ հետ. այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Դ . — Պիտի օրհնեմ Տէրն ամէն ատեն. ամէն  
ատեն անոր անունն իմ բերնիս մէջ:

Ք . — Օրհնեալ ✠ եղէ՛ք Հոգւոյն Սրբոյ շնորհ-  
ներէն. խաղաղութեամբ գացէ՛ք, եւ Տէրն ըլլայ մեր  
ամենուն հետ. Ամէն:

(Չարհանելու) — Տէ՛ր Աստուած, Յիսուս Քրիս-  
տոս, ողորմէ՛ ինձ:

## ՕՐԸՆՈՒԹԻՒՆ

### Կենսաբար Խորհրդով Հաղորդութեան

Մեր Մայրը Սուրբ Եկեղեցին Ամենասուրբ Հաղորդութեան հանդէպ իր զաւակացը ջերմեւանդութիւնը արժարժել ուզելով, այս նպատակին ծառայելու յատուկ զանազան արարողութիւններ հաստատեց յաջորդաբար, որք են.— Օրհնութիւն, Երկրագոյնութիւն, Կարասութիւն, Ժամասէն. Մշտնջենական Երկրագոյնութիւն, Սուրբ Ժամ, Այս արարողութեանց ժամանակ Ամենասուրբ Հաղորդութիւնը շքեղ եւ փառաւոր ճանչի մը մէջ զետեղուած քրիստոնէից երկրագութեանը համար սեղանէն բարձր տեղ մը կը դրուի եւ բոլորտիքը շատ մը ճրագ կը վառուի:

(Վեց հար մեղրամոմ անհրաժեշտ պէտք է, եւ բաւական ալ է:

Այս արարողութեանց ամենէն կարճատեւն է Օրհնութիւնը:

Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցւոյ մէջ Օրհնութիւնը կը տրուի հետեւեալ կերպերով:



## ՕՐ Հ Ն ՈՒ Յ Ի Ի Ն

ԿԵՆԱՐԱՐ ԽՈՐՀՐԴՈՎ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

### Ե Ր Գ

Մայր հաւատոյ սուրբ հարսնարան  
Եւ առագաստ գերադրական .

Տուն փեսայիդ անմահական  
Որ զարդարեաց զքեզ անվախճան :

Երկրորդ երկին զու հրաշական .  
Փառաց 'ի փառքս բարձրական .  
Որ զմեզ ծնանիս լուսոյ նրման  
Աւազանաւն որդիական :

Բաշխես ըզհացրդ մաքրական .  
Զարիւնդ ըմպել տաս սոսկական .  
Հանես 'ի վեր գերաստիճան  
Իմանալեացըն զուգական :

Եկայք Որդիք նոր Սիրնի .  
Մատիք առ Տէր մեր սրբբութեամբ .  
Ճաշակեցէք և տեսէք .  
Զի քաղցր է Տէր մեր զօրութեամբ :

Նա բաժանեաց ըզՅորդանան :  
Դու զծով մեղաց աշխարհական .  
Նըմա Յեսու մեծ զօրական .  
Քեզ Տէր Յիսուս Հօր էական :

Հինն օրինակ քեզ և նման ,  
Դու խորանին գերազրական .  
Նա խորտակեաց զգրունս անդամանդ .  
Դու զըժօխսց զգրունս 'ի հիմանց .

Հացս այս մարմին է Քրիստոսի .  
Բաժակս արիւն նորոյ ուխտի .  
Ծածկեալ խորհուրդըն մեծ յայտնի .  
Աստուած 'ի սմա մեզ տեսանի :

Սա է Քրիստոս Բանն Աստըւած ,  
Որ ընդ աջմէ Հօրըն բազմի .  
Եւ աստ 'ի մեզ պատարագի .  
Բառնայ ըզմեղըս աշխարհի :

Այն որ օրհնեալ է յաւիտեան  
Հարբ և Հոգևովըն միաբան .  
Այժմ և յաւէտ և յապագայն  
Եւ անըսպառ միշտ յաւիտեան :

Ա. Ղ. Օ. Թ. Ք

Տէր Աստուած բարձրեալ ամենակալ ,  
լոյս անքնին , մեծութիւն անեղ , գթու-

Թիւն անսահմանելի , մարդասիրութիւն  
օրհնաբանելի , Յիսուս Աստուծոյ կենդան-  
ւոյ միածին Որդի : Որ սքանչելարուեստ  
հրաշիւք , անպարագիրդ էակ , վասն մեր  
եղեր մարդ 'ի Կուսէն : Որ արեամբդ քով  
զմեզ ստացար և մարմնովդ կերակրես : Որ  
կարգեալ զայս խորհուրդ անճառելի՝ ուխտ  
կենաց անփոխադրելի սահմանեցեր : Որ  
յանուն զենման՝ միշտ յիշատակաւ քոց  
չարչարանաց առ Հայր քո բարերար աղօ-  
թել զմեզ համարձակեցեր , և զայս տուրս  
չնորհաց քան զամենայն գործոց քոց զըս-  
քանչելիսն մեծացուցեր : Լո՛ւր մեզ , բազ-  
մագութ մարդասէր , տո՛ւր զպարարեալ  
վշտօք մարմինդ քո ամենայն սրտի սրբա-  
րար կերակուր . զի զքեզ ունին քաւիչ քա-  
հանայ՝ գնեալ արեամբ հօտս քո , հայեա՛ց  
յամենեսեան , հանգո՛ զաշխատանս մեր 'ի  
քո օթեւանսդ , ուր գնացեր , Տէ՛ր , և խոս-  
տացար : Արժանացո՛ զքոյս փառաւորել  
զքեզ այդր ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ  
'ի յաւիտեանս :

Դպ . — Ամէն :

Ա Ղ Օ Թ Ք

Վասն Սրբազան Քահանայապետեիև:

Հովի՛ւ քաջ և առաջնորդ բանաւոր հօտի, աղաչեմք զքեզ, Տէ՛ր, նայեա՛ գթութեամբ ՚ի ծառայ քո (Ա. Ա.) Քահանայապետ՝ զոր կարգեցեր հովիւ եկեղեցւոյ քում սրբոյ տու՛ր նմա բանիւք և արդեամբք առաջնորդել ՚ի փրկութիւն իւրոց հնազանդելոցն հաւատացեալ նմա հօտին. զի ընդ նոսին ժամանեցէ ՚ի կեանսդ յաւիտենից:

Դպ. — Ամէն:

Դպ. — Աստուած մեր և Տէր մեր, երեւեցաւ մեզ: Օրհնեա՛լ եկեալ անուամբ Տեառն:

Քհչ. — Կեցո՛, Տէ՛ր զժողովուրդս քո, և օրհնեա՛ զժառանգութիւնս քո, հովուեա՛ և բարձրացո՛ զսոսա յայամհետէ մինչեւ յաւիտեան:

Դպ. — ՅԱստուածային կայծակունսն. ՚ի սրովբէից անհրպելին. անմաքրապէս մերձեցաք. գոլ պարտապան քում խորհրդոյդ. շնորհեա՛ ըզնոյն մաքրութեամբ. ՚ի թողութիւն մեղաց մերոց:

Որ վառեցար 'ի յարփւոյն և ոչ կիզար  
ըստ մորենւոյն, այլ ետուր զհացըն կենաց  
կերակուր բանաւորաց. բարեխօսեա՛ առ  
Քրիստոս ջընջել ըզգիր մեղաց մերոց :

Մեծ պահոց ատեն «Մայր հաւատոյ»ի տեղ  
կ'ըսուի ողբածայն :

### Ս Ա Ղ Մ Ո Ս Ծ .

Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի  
ողորմութեան քում, ըստ բազում գթու-  
թեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ :

Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմ-  
մէ. և 'ի մեղաց իմոց սուրբ արա՛ զիս :

Չանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ.  
և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ :

Քեզ միայն մեղայ, Տէ՛ր, և զչար առաջի  
քո արարի :

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո և  
յաղթեսցես 'ի դատելն քո :

Անօրէնութեամբ յղացաւ, և 'ի մեղս  
ծնաւ զիս մայր իմ :

Դու, Տէ՛ր, զճշմարտութիւն սիրեցեր.  
զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ  
քով յայտնեցեր ինձ :

Յօղեա՛ յիս մշտկաւ, և սուրբ եղէց լուա՛, և քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա՛ ինձ, Տէր, զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն:

Սիրտ սուրբ հաստեա՛ յիս, Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում:

Մի ընկենո՛ւր զիս, Տէ՛ր, յերեսաց քոց, և զհոգի քո Սուրբ մի հանն՛ր յինէն:

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան, և հոգևով պետութեան քո հաստատեա՛ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամպարիշտք առ քեզ զարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ, Աստո՛ւած, Աստուած փրկութեան իմոյ, և ցնծասցէ լեզու իմ յարգարութեան քում:

Տէ՛ր, եթէ զչրթունս իմ բանաս բերան ի: Երգեսցէ զօրհնութիւնս քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ :

Բարի արա՛ , Տէր , կամօք քովք Սիրովնի , և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի :

Յանժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան . ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից .

Ամէն :

Օրհնութիւն Վերջը «ՅԱստուծոյն կայծակնուն»ի Դեղ իջնութի :

Ե Ր Փ

Թագաւորն արարածոց .  
Զհացըն կենաց ետ քաղցելոց .  
Եւ ըզբաժակն ուրախարար .  
Որք յԱդամայ տըրամեցելոց .  
Այս նոր ուխտ է իմոյ արեան .  
Փոխան հընոյ ուխտին արեան .  
Զոր յիշատակ իմ առնեցէք .  
Մինչև եկից ես միւսանդամ :

Ժողովեալքս 'ի քէն հայցեմք .  
Ընդ ժողովեալ մետասանին .  
Յոր զկենարարըդ քո մարմին .  
Բաշխեալ ետուր ընդ բաժակին .  
Շնորհեա' և մեզ Տէր ընդ նոսին .  
Հաղորդ լինել քում սեղանին .  
Կենաց հացիդ յոր փափաքիմք .  
Եւ ըմպելոյդ ում ծարաւիմք :

---





ԵՍ ԱՆԱՐԱՏ ՅԳՈՒԹԻՒՆՆ ԵՄ



Օրհնեալ է  
Սուրբ եւ Անարատ Յղութիւնն  
Երանուհւոյ Կուսին Մարեմայ,  
Մօրն Աստուծոյ:

Երբեմն օրհնութենէ յառաջ կրնան քառիլ  
նաեւ հետեւեալ աղօթքները. Մանաւանդ  
Աստուածամայի տօներու եւ Մայիս ամսոյ մէջ:

Պ Ա Ղ Ա Տ Ա Ն Ք

Առ Ամենասուրբ Կոյսն Մարիամ,

Տէր ողորմեա՛ :

Քրիստոս ողորմեա՛ :

Տէր ողորմեա՛ :

Քրիստոս լո՛ւր մեզ :

Քրիստոս անսա՛ մեզ :

Հայր երկնաւոր Աստուած . ողորմեա՛ մեզ :

Որդի փրկիչ աշխարհի Աստուած . ողոր :

Հոգիդ Սուրբ Աստուած . ողոր :

Սուրբ Երրորդութիւն մի Աստուած . ողոր :

Սրբունի Մարիամ . աղօթեա՛ վասն մեր :

Սուրբ Աստուածամիջն . աղօ :

Սուրբ Կոյս կուսանաց . աղօ :

Մայր Քրիստոսի . աղօ :

Մայր աստուածային շնորհաց . աղօ :

Մայր մաքուր . աղօ :

Մայր սուրբ . աղօ :

Մայր անարատ . աղօ :

Մայր անբիծ . աղօ :

Մայր սիրելի . աղօ :

Մայր սքանչելի . աղօ :

Մայր բարի խորհրդոյ . աղօ :

Մայր արարչին .	աղօ :
Մայր փրկչին .	աղօ :
Կոյս իմաստուն ,	աղօ :
Կոյս յարգոյ .	աղօ :
Կոյս քարոզելի .	աղօ :
Կոյս հզօր .	աղօ :
Կոյս գթած .	աղօ :
Կոյս հաւատարիմ .	աղօ :
Հայելի արդարութեան ,	աղօ :
Աթոռ իմաստութեան ,	աղօ :
Պատճառ մերոյ խնդութեան .	աղօ :
Անօթ հոգեւորական .	աղօ :
Անօթ պատուելի .	աղօ :
Անօթ ընտիր աստուածպաշտութեան	աղօ :
Վարդ խորհրդական .	աղօ :
Աշտարակ դաւթեան .	աղօ :
Աշտարակ փղոսկրեայ .	աղօ :
Տուն ոսկեղէն .	աղօ :
Տապանակ ուխտի .	աղօ :
Դունն երկնից .	աղօ :
Աստղ առաւօտեան .	աղօ :
Առողջութիւն հիւանդաց .	աղօ :
Ապաստան մեղաւորաց .	աղօ :

Մխիթարիչ վշտացելոց .	աղօ :
Օգնական Քրիստոնէից .	աղօ :
Թագունի հրեշտակաց .	աղօ :
Թագունի նահապետաց .	աղօ :
Թագունի մարգարէից .	աղօ :
Թագունի առաքելոց .	աղօ :
Թագունի մարտիրոսաց .	աղօ :
Թագունի խոստովանողաց .	աղօ :
Թագունի կուսանաց .	աղօ :
Թագունի ամենայն սրբոց .	աղօ :
Թագունի յղացեալ առանց արատոյ մեղաց .	աղօ :
Թագունի ամենասուրբ վարդարանի .	աղօ :
Թագունի խաղաղութեան .	աղօ :
Գառն Աստուծոյ , որ բառնաս զմեզս աշ- խարհի . խնայեա' , 'ի մեզ Տէր .	
Գառն Աստուծոյ , որ բառնաս զմեզս աշ- խարհի . անսա' մեզ Տէր :	
Գառն Աստուծոյ , որ բառնաս զմեզս աշ- խարհի . ողորմեա' մեզ :	
Յիսուս լս'ւր մեզ :	
Քրիստոս անսա' մեզ :	
Աղաչեա' վասն մեր Սուրբ Աստուածածին .	
Զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի :	

## ՄԱՂԹԱՆՔ ԱՌ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Մայր սուրբ սքանչելի լուսոյն , որ զԱստուածն յաւիտենից յորովայնի քում կրեցեր և ցնծութիւն աշխարհի ծնար զԲանն Աստուած . Աղաչեմք . Մայր սուրբ բարեխօսեա՛ :

Աղաչեա՛ վասն մեր զառ 'ի քէն զմարմնացեալն Աստուած , որ խոնարհեցաւ 'ի հայրական ծոցոյ . էառ մարմինն ըստ մարդկային բնութեանս , առնել խաղաղութիւն յերկինս և յերկրի . Աղաչեմք . Մայր . . .

Աղաչեա՛ . . . ներել մեզ անտես առնել զյանցանս մեր . և տալ օգնականութիւն ընդդիմակաց լինել հակառակամարտիցն 'ի պատերազմի . Աղաչեմք . Մայր . . .

Աղաչեա՛ . . . զի լռեսցեն պատերազմունք , դադարեսցեն յարձակմունք թշնամեաց , տընկեսցի սէր և արդարութիւն 'ի յերկրի . Աղաչեմք , Մայր . . .

Աղաչեա՛ . . . աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բղիսումն աղբերաց . զառատ պտղաբերութիւն բուսոց և տնկոց . առ 'ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց . Աղաչեմք . Մայր . . .

## ՄԱՂԹԱՆՔ ԱՌ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Մքանչելի լուսոյն սուրբ Մայրը, որ յաւիտենից  
Աստուածը որովայնիդ մէջ կրեցիր եւ Բանն Աս-  
տուածը, աշխարհիս ցնծութիւնը ծնար. Կ'աղաչենք.  
Մայր սուրբ բարեխօսեա՛:

Մեզ համար աղաչէ քեզմէ մարմնացեալ Աստու-  
ծոյ, որ հայրական ծոցէն խոնարհեցաւ, մեր մարդ-  
կային բնութեան համարատ մարմին առաւ, երկինքի  
մէջ եւ երկրի վրայ խաղաղութիւն հաստատելու  
համար. Կ'աղաչենք. Մայր...

Մեզ համար... որ ներէ մեզ եւ մեր յանցանք-  
ները անտես ընէ, եւ պատերազմի ատեն հակա-  
ռակորդաց դէմ զնելու օգնութիւն տայ. Կ'աղաչենք  
Մայր...

Մեզ համար... որ պատերազմները լռեն, թըշ-  
նամեաց յարձակումները դադրին. երկրի վրայ հաս-  
տատուի սէր եւ արդարութիւն. Կ'աղաչենք. Մայր...

Մեզ համար... որ մեր երկրի վրայ անեցնէ աղ-  
բիւրներու քաղցր բղիսումը, բոյսերուն եւ տունկե-  
րուն առատ պտղաբերութիւնը, որպէսզի մեր ամէն  
հարկաւոր պէտքերը զուարճալի ըլլան. Կ'աղաչենք.  
Մայր...

Աղաչեա՛ . . . զի միաբանեցէ զեկեղեցի  
իւր սուրբ. շինեալ 'ի վերայ հիման առա-  
քելոց և մարգարէից. պահել անարատ մին-  
չեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ. Աղա-  
չեմք. Մայր . . .

Աղաչեա՛ վասն մեր Սրբուհի զՄիածին  
քո զՈրդի. և վասն հոգւոցն հանգուցելոց՝  
ընդունել յարքայութիւն երկնից, և տալ  
մասն և բաժին ընդ սուրբս ամենայն. Աղա-  
չեմք. Մայր . . .

Եւ եւս առաւել զյորդորունս սիրոյ և  
զգործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք :  
Տո՛ւր մեզ, Տէ՛ր, Աստուած մեր :

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աս-  
տուծոյ յանձն արասցու՛ք : Բեզ, Տեառնդ,  
յանձն եզիցուք :

Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր,  
ըստ մեծի ողորմութեան քում, ասասցու՛ք  
ամենեքեան միաբանութեամբ : Տէ՛ր, ողոր-  
մեա՛, Տէ՛ր, ողորմեա՛, Մայր սուրբ բարե-  
խօսեա՛ առ Տէր վասն մեր :



Մեզ համար... որպէս զի առաքելոց եւ մար-  
գարէից հիման վրայ շինուած իր սուրբ եկեղեցին  
միաբանէ, եւ մինչեւ իր տեսանելի զախտեան օրը  
անարատ պահէ. Կ'աղաչենք. Մայր...

Ո՛վ Սրբուհի Մարիամ, բու Միածին Որդւոյդ  
աղաչէ՛ մեզ եւ ննջեցեալ հոգւոց համար, որ իր  
երկնից արքայութեան մէջ ընդունի եւ ամէն սրբոց  
հետ մասն ու բաժին տայ. Կ'աղաչենք. Մայր...

Եւ եւս առաւել կը խնդրենք, որ մեզ պարգեւէ  
առատ սէր եւ բարեգործութիւններ: Մեր Տէր Աս-  
տուածը շնորհէ՛ մեզ:

Մեր անձերը եւ մէկզմէկ յանձնե՛նք Տէր Աս-  
տուծոյ: Տէր Աստուած քեզ կը յանձնուինք:

Մեր Տէր Աստուածը, ողորմէ՛ մեզ բու մեծ սիրո-  
ւթեանդ համեմատ: Ամէնքնիս միաբանութեամբ  
ըսենք. Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛, Մայր սուրբ  
մեզ համար Տիրոջ բարեխօսէ՛

## ՇԱՐԱԿԱՆՔ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

ԲԶ. Անկանիւմք առաջի քո Աստուածա-  
ծին. և աղաչեմք զԱնարատ ըզկոյսդ: Բա-  
րեխօսեա՛ վասն անձանց մերոց. և աղաչեա՛  
զմիածին Որդիդ. Փրկել զմեզ ՚ի փորձութենէ  
և յամենայն վտանգից մերոց:

ԴԿ. «**քեզի**. Սրբբուհի Մարիամ, սափոր  
սսկի և տապանակ կտակարանաց, որ զ՚ի  
վերուստ Հացըն կենաց պարգեւեցեր քաղց-  
եալ բնութեանս. առ նա միշտ բարեխօսեա՛  
վասն քաւութեան մեղաց մերոց:

Դասք անմարմնոց հրեշտակաց. քեզ երա-  
նեն ամենօրհնեալ կոյս Մարիամ. որ զէա-  
կից Բանն, որ ընդ Հօր կրեցեր ՚ի քեզ ան-  
սերմնապէս, առ նա միշտ բարեխօսեա՛ վասն  
քաւութեան մեղաց մերոց:

Վասն որոյ և մեք հաւատացեալքս քեզ  
երկրպագեմք Քրիստոս և արտասուօք հայ-  
ցեմք ՚ի քէն. բարեխօսութեամբ Աստուա-  
ծածնին. զԱստուածային լոյս քո ծագեա՛  
յանձինս մեր. Օրհնեմք զքեզ ՚ի յարութեան  
երեկոյիս ահաւոր թագաւոր:

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՐ Յ. Մ. Ք.Ի ՅԻՍՈՒՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ

---

1. Աղօթագիրք եւ համառօս մեկնութիւն քրիստոնէական կրօնի. հայերէն. էջ 245. գին անկգմ. դահեկան 30. կիսլթկգ. 35:
2. Նոյնը՝ քրեւերէն, բայց հյտն. էջ 274 գին անկգմ. դհկն 35. կիսլթկգմ 40:
3. Խորհուրդ Սուրբ պատարագին. գրքր. եւ աշխհրք. եւ Օրհնութիւն կեանարար խորհրդով հաղորդութեան. էջ 72+88=160. գին անկգմ. դհկն. 15. կսլթկգմ. 20:
4. Պսակաւան Անարատ Յղացեալն Աստուածամայր. Շարակնոցէն քաղուած. գրքր. եւ աշխհրք. էջ 51 + 62=113. գին անկգմ. դհկն. 10, կիսլթկգմ. 15:
5. Ամիս Մարիամեան. էջ. 94. գին անկգմ. դհկն. 5. կիսլթկգմ. 10:
6. Ամիս Սուրբ Մրսին Յիսուսի. էջ 101. գին անկգմ. դհկն. 5. կիսլթկգմ. 10:
7. Գոհութիւն ՚ի պատիւ Սուրբ Մրսին Յիսուսի. էջ 53 գին անկգմ. դհկն. 5 կիսլթկգմ. 10:

8. Ընդարձակ ֆրիսոնէական վարդապետութիւն.  
հայերէն. էջ 160. գին անկգմ. դիկն. 20 կիսլթգմ 25:
9. Համառօտ ֆրիսոնէական վարդապետութիւն. հյրն.  
էջ 64+26=90 գին անկազմ. դիկն. 10: Պարզ  
կազմ 15:
10. Նոյնը քրեերէն. բայց հյսռ. էջ 64. գին երկաթ-  
եայ թելով կապուած. դիկն. 10:
11. Սուրբ Գրոց Պատմութիւն. հայերէն. Ա. Մաս. — Հին  
Կսակարան. էջ 176. անկազմ 30. կիսլթգմ 35:
12. Ս. Գրոց Պատմութիւն. Բ. Մաս, Նոր Կսակարան.  
գին անկազմ. դիկն. 30. կիսլթգմ. 35:

ԾԱՆՈԹ.—

**Մեծաբանակ գնողին՝ արտակարգ զեղջ:**

Կեդրոնատեղին է.

ԱԵԱԶ ՓԱՇԱ, ՓՈՂՈՅ ՍԷՐԱՅ ԱՐԳԱՍԸ, ԹԻԻ 11

**Կ. ՊՈԼԻՍ**

ADRESSE:

Pères Jésuites

Rue Sérai arkassi N. 11

Ayaz Pacha

CONSTANTINOPLÉ





İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



**\*ERM1350\***

255.07.02.01.06.00/

